Ազգ
Azg
2 ՆՈՅԵՄԲԵՐ 1996, ՇԱԲԱԹ # 208 (1214)

ՀՀ նախագահը Հրանտ Բագրատյանին աշխատանքից ազատելու հրամանագիր չի ստորագրել

ԵՐԵՎԱՆ, 1 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Նոյեմբերի 1-ին, ժամը 13.00-ի դրությամբ ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմից կառավարության փոփոխություններին վերաբերող հրամանագիր ստորագրված չի եղել: Այս մասին Նոյյան Տապան գործակալության թղթակցին հայտնեցին ՀՀ նախագահի մամուլի ծառայությունից:

Նույն աղբյուրը հերքեց նաեւ լուրերն այն մասին, թե, իբր, գրասենյակից ազատվել է ՀՀ վարչապետ Հրանտ Բագրատյանը, նշելով, որ իրենք այդպիսի տեղեկություն չունեն:

ՀՀ կառավարության մամուլի ծառայությունից հայտնեցին, որ վարչապետ Հրանտ Բագրատյանն այսօր աշխատանքային հանդիպում է ունեցել արտասահմանյան հյուրերի հետ:

ԵՐԵՎԱՆ

Արտոնված հանրահավաք եւ արտոնված հացադուլ

Նախ, քանակի մասին. Ես արդեն, իրոք, դժվարանում եմ ասել, թե իրականում քանի տասնյակ հազար էր Ազատության հրապարակում հավաքվածների թիվը (այդ ցուցանիշը տարեցտարի «ենթարկվում է» աներեւակայելի տատանումների), բայց փաստն այն է, որ հրապարակից դուրս շատ մարդ կար նաեւ «ծառերի տակ»: Մի խոսքով, 1988 հանած արտագաղթածներ: Ոչ ավել, ոչ պակաս...

Այժմ որակի մասին. 1988 հանած մի քանի ներկայիս իշխանավորների ելույթներ: Անցյալը գրեթե նույնն էր. նույն դեմքերը (ճիշտ է, քիչ ավելի ծերացված) եւ նույն հավաքվածները՝ շատ ավելի սուղված: Նոր իրականություն եւ հին խնդիրներ՝ ազատ երկիր, ժողովրդավարության հաստատում, օրենքի գերակայություն, դե գիտեք, քաղբանտարկյալներ, Ղարաբաղ, որտեղ մարտնչել են այդ քաղբանտարկյալները, եւ այլն: Փոխվել է լոկ բնակչության կողմնորոշումը, այն ավելի է թուլացել եւ սկսել է նոր շարժում հանուն հիասթափված գաղափարների: Շարժման գագաթնակետն էին մինչ օրս նախագահական ընտրությունները եւ հաջորդող «հեղափոխման փորձը»:

Ինչպիսի՞ն կլինի Սահմանադրական դատարանի որոշումը, ի՞նչ եղանակով է այնուհետեւ ընթանալու շարժումը եւ ի՞նչ է լինելու հացադուլավորների հետ: Ահա սրանք էին երեկվա հանրահավաքում շոշափվող հարցերը, որոնց շուրջ ելույթ ունեցան Հրայր Կարապետյանը, Շավարշ Քոչարյանը, Պարույր Հայրիկյանը, Վարդան Պետրոսյանը եւ Վազգեն Մանուկյանը: Բոլորի համոզվածությունը նույնն էր. «Հաշվի առնելով Սահմանադրական դատարանի ծագումնաբանական անցյալը եւ նրա ներկայիս կազմը, որեւէ վստահություն չկա անաչառ որոշում ընդունելու վերաբերյալ: Ավելին, վստահություն կա, որ նման բան չի լինի»: Այս տողերում ունեն իր տրամաբանական հիմքը՝ «իրավական դաշտի բացակայություն, քրեական տարրերի մենիշխանություն, բնակչության հանդեպ իշխանությունից օգտվողների անտարբերություն»: Վերջին, պարտադրված լինելով մասնանշել բազմաթիվ օրինախախտումները, ելույթավորները կարծես դոփում էին նույն տեղում, սակայն այդ դոփյունը ոչ թե անորոշանդակ էր, այլ սկզբունքային, նման էր պատրաստ վանդակված ազատատենչ նժույգի դոփյունին: Սա զուգորդության կարգով: Անօրինականությունների մասին խոսելով, ՀՅԴ Գերագույն մարմնի անդամ Վարդան Պետրոսյանը նշեց, այսպես կոչված, «Դրո-2» գործի մասին, «երբ արդեն շուրջ երկու տարի է, ինչ ՊԱԿ-ի մեկուսարաններում գտնվում է հինգ քաղաքացի, որոնց դատավարությունը չի սկսվում»:

Քաղբանտարկյալների վերաբերյալ բոլոր հռետորները մանրամասն կանգ առնելով «խայտառակ դատավարությունների» վրա, կոչ արեցին հավաքվածներին ընդունել ՀՀ իշխանություններին ուղղված Ազգային համաձայնության հայտարարությունը հացադուլավորների («Վահան Հովհաննիսյան+30».-Ա. Դ.) շուտ ազատ արձակման պահանջով:

Ամփոփիչ ելույթով հանդես եկած Վազգեն Մանուկյանը նշեց, որ «1988-ին եւ դեռ ավել՝ հարյուրավոր տարիների ընթացքում մեր պապերի կողմից սկսված շարժումը պետք է շարունակել, եւ նոյեմբերի 8-ի հանրահավաքից ու առավել նախագահի երդումից ու Սահմանադրական դատարանի որոշումից հետո, ավելի պարզ կուրվագծվեն մեր հետագա պայքարի ուղղությունները»: Նա դատապարտեց լեհ լրագրողին տված ՀՀ նախագահի հարցազրույցի բովանդակությունը, «որը ստվեր է գցում ընդհանրապես հայության վրա եւ մասնավորապես ուղղված է հայ-վրացական հարաբերությունների վատթարացմանը»: Վազգեն Մանուկյանը արտահայտեց նաեւ այն միտքը, որ խոստացված կադրային փոփոխությունների հետեւանքով «միեւնույն է, ոչինչ չի փոխվի, քանզի կմնա նույն ռեժիմը»:

ԱՐԾՎԻ ՂԱԶԻՆՅԱՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Դումայի պատվիրակությունը Հայաստան կայցելի նոյեմբերի առաջին կեսին

ՄՈՍԿՎԱ, 1 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի ներկայացուցչական պատվիրակությունը Հայաստանի խորհրդարանի հրավերով Երեւան կայցելի ս.թ. նոյեմբերի առաջին կեսին: Այս մասին Արմենպրեսի թղթակցին այսօր հայտնեց Պետական դումայի փոխնախագահ Միխայիլ Գուցերիեւը, որը գլխավորում է խորհրդարանի ստորին պալատի Կովկասի եւ Ռուսաստանի հարավի գործերի մշտական խորհուրդը:

Դումայի փոխխոսնակի ասելով անցյալ շատ լուրջ հիմնախնդիրներ են կուտակվել Ռուսաստանի եւ Հայաստանի փոխհարաբերություններում, եւ անհրաժեշտ է ձեռնամուխ լինել դրանց լուծմանը, այդ թվում նաեւ խորհրդարանական մակարդակով: «Երկու երկրների խորհրդարանների փոխգործակցությունը շատ կարեւոր օժանդակություն է եւ կտա եղբայր ժողովուրդների փոխհարաբերությունների զարգացման եւ խաղաղման գործում», նշեց Պետական դումայի փոխխոսնակը:

Ելցինը ավելի շատ լիազորություններ է տալիս Չեռնոմիրդինին

ՄՈՍԿՎԱ, 1 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՏ-DPA: Ուրբաթ օրը Կրեմլի մամուլի քարտուղարն ասել է, որ Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը, որին մյուս շաբաթ հավանաբար պսակաձեւ զարկերակի շրջանցման վիրահատություն են անելու, ավելի շատ լիազորություններ է տվել վարչապետ Վիկտոր Չեռնոմիրդինին: Մասնավորապես Չեռնոմիրդինին արտոնվել է ստորագրել պայմանագրեր դաշնային եւ տարածքային կառավարող մարմինների միջեւ լիազորությունների տարանջատման մասին:

Մամուլի քարտուղար Սերգեյ Յաստրժեմբսկին ասել է, որ Կրեմլը մասնանշել է իր մտադրությունը՝ չեղյալ հայտարարել բոլոր տեղական օրենքները, որոնք հակասում են դաշնային օրենքին:

Սեպտեմբերին Ելցինը վարչապետին հանձնել էր Ռուսաստանի այսպես կոչված «ուժային նախարարությունների» հսկողությունը: Սակայն նա իրեն է թողել երկրի միջուկային զինանոցի հսկողությունը: Միաժամանակ վարչապետին իրավունք տրվեց անհրաժեշտության դեպքում հրավիրել Պաշտպանության խորհրդի բանակի բարեփոխման պլանները քննարկելու համար:

Այն հարցին, թե ինչքա՞ն ժամանակ Չեռնոմիրդինը պետք է ստանձնի նախագահի պարտականությունները, Յաստրժեմբսկին ասել, «Մի ծեւարկեպում կգտնվի»:

Ելցինի աշխատակազմի ղեկավար Անատոլի Չուբայսն ավելի վաղ ասել է, որ նախագահը, հավանաբար, կզիջի իր իշխանությունը վիրահատությունից հետո միայն «մի քանի ժամ, մի օր, երկու օր»:

Ելցինի հետ ամեն օր շփվում են միայն երկու մարդ՝ Չուբայսը եւ Տատյանա Դյաչենկոն՝ նախագահի կրտսեր դուստրը, ընդ որում Չուբայսն է որոշում, թե երբ եւ ում հետ Ելցինը հանդիպի:

Պրիմակովը վերահաստատում է Ռուսաստանի դերը Մերձավոր Արեւելքում

1 ՆՈՅԵՄԲԵՐ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Այսօր Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Եվգենի Պրիմակովը հանդիպում ունեցավ Պաղեստինի նախագահ Յասեր Արաֆաթի հետ՝ նրա հետ քննարկելու իսրայելա-պաղեստինյան խաղաղության գործընթացը: Երեկ Պրիմակովը մեկօրյա այցով եղել է նաեւ Իսրայելում: Տարածաշրջանում սկսված նրա այցերը Մերձավոր Արեւելքի խաղաղարար գործընթացում Ռուսաստանի առաջատար դերի վերահաստատմանն են նպատակաուղղված, քանի որ վերջին 5 տարիների ընթացքում այդ խնդրում գերիշխող էր Միացյալ Նահանգների դերը:

■ ԱԺՄ-ից Արմենպրեսի թղթակցին հայտնեցին, որ իրենց սխալմամբ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում առաջադրված բոլոր ամենակնածներ կուսակցության կողմից համարվել են իրենց թեկնածությունները: Իսկ թե այդ «բոլորը» քանի՞սն են, հայտնի չէ: Ասվեց, թե սխալներ չկան տեղական ընտրություններում ԱԺՄ-ի ունեցած թեկնածուների թվի մասին:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

ԱՇԽԱՐՀ

Բրիտանացիները հաստատում են ամերիկացիների կարծիքը, որ Մարսի վրա կյանք է գոյություն ունեցել

1 ՆՈՅԵՄԲԵՐ, BBC: Բրիտանական գիտնականները հաստատում են ամերիկյան իրենց գործընկերների կարծիքն այն մասին, որ Մարս մոլորակի վրա առաջներում գոյություն է ունեցել կյանք եւ չեն բացառում, որ այն գոյություն ունի մինչ այժմ: Այդ մասին հայտնելով երեկ Լոնդոնում տեղի ունեցած մամուլի ասուլիսում, գիտնականները նշեցին, որ այդ եզրակացությանն իրենք հանգել են Անտարկտիդայում հայտնաբերված Մարսի մեկ այլ երկնաքարի ուսումնասիրության հիման վրա: Առաջին այդպիսի երկնաքարն ուսումնասիրած ամերիկյան NASA տիեզերական գործակալության մասնագետներն օգոստոս ամսին հայտնել էին, որ հայտնաբերել են միկրոօրգանիզմների հետքեր:

Քիմիական զենքն աշխարհում արգելվեց

1 ՆՈՅԵՄԲԵՐ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»: Զինաթափման հարցում ՄԱԿ-ին հաջողվեց ունենալ մեծ հաջողություն: Հաջորդ տարվա ապրիլի վերջին ուժի մեջ կմտնի միջազգային պայմանագիրը, որն արգելում է քիմիական զենքի մշակումն, արտադրությունն ու օգտագործումը: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալին այդ իրադարձությունն անվանեց բացառիկ հաջողություն համընդհանուր զինաթափման բնագավառում: Որպեսզի կոնվենցիան ուժի մեջ մտնի, անհրաժեշտ էր, որ այն ստորագրեին 65 պետություն: Վերջին, 65-րդ երկիրը Հունգարիան դարձավ: Ամերիկյան Սենատը հետաձգել է պայմանագրի վավերացումը, սակայն Ռուսաստանն ու ԱՄՆ-ը արդեն սկսել են իրենց քիմիական զինանոցների զուգահեռ ոչնչացման ծրագիրը:

Սեւաստոպոլի նավատորմը նշեց իր 300-ամյակը

ՇՐՋԱՆ

Սահմանի բացումը մեծապես կազդի Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունների վրա

BBC-ի թղթակիցը հարցազրույց է ունեցել Թուրքիայի խորհրդարանի անդամ, քաղաքագետ-փորձագետ Ահադ Անդիջանի հետ:

- Մոսկվայում Թուրքիան ինչո՞ւ կոշտ դիրք բռնեց Հայաստանի նկատմամբ:

- Այդ քաղաքականության հիմքում ընկած են Ադրբեջանի հարաբերությունները Հայաստանի հետ: Թյուրքական պետությունների անկախության առաջացից հետո սկսված ադրբեջանա-հայկական հակամարտության պատճառով Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունները վատթարացին. նա սկսեց անհանգստանալ Ադրբեջանի կայունության համար: Հայաստանի կողմից ադրբեջանական տարածքների գրավումից հետո Թուրքիան սառեցրեց իր հարաբերությունները Հայաստանի հետ:

- Այսինքն կարելի՞ է ասել, որ Թուրքիան զոհաբերում է իր սեփական առեւտրական ու տնտեսական շահերը գրավից լինելով Ադրբեջանին:

- Այսպես ձեւակերպելը ճիշտ չէ լինի: Սակայն դրանում ճշմարտության մաս կա: Թուրքիան կարող էր լավին խոսացնել իր շահերը, հարաբերություններ հաստատելով Հայաստանի հետ, եթե չլիներ հակամարտությունը Ադրբեջանի հետ: Սակայն, ինչպես գիտեք, կա նաեւ պատմական Հայաստան. Հայերը երազում են մեծ Հայաստան Թուրքիայում: Նման բնույթի խնդիրներն էլ են ազդում Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունների վրա: Սակայն այսօր առաջնայինը Ադրբեջանի հարցն է: Ներկայումս Թուրքիան ու [illegible] այդ հարցում: Մեր քաղաքականների մի մասը «ծախեց», Հայաստանի հետ հարաբերությունները չեն բարելավում [illegible], այդ թվում եւ Դեմիրելը, այն կարծիքին են, որ մինչեւ Հայաստանի հետ Ադրբեջանի հարաբերությունները չկարգավորվեն, Հայաստանի հետ Թուրքիայի հարաբերությունները նույնպես չեն բարելավվի:

- Պատկերացնենք, որ վաղը Թուրքիան բացի սահմանը Հայաստանի հետ: Ձեր կարծիքով դա ինչպե՞ս կանդրադառնա ադրբեջանա-թուրքական հարաբերությունների վրա:

- Բացումը առաջին հերթին մեծ նշանակություն չունի Թուրքիայի համար, չի ազդի նրա [illegible] վրա, սակայն մեծապես կազդի Ադրբեջանի [illegible] վրա, [illegible] Հեյդար Ալիեւը [illegible] ասել էր, թե [illegible] հարաբերություններ [illegible] Ադրբեջանի հետ հարաբերությունները ավելի են կսառեն:

[illegible]

ԱԶԳ **տեղական**

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ընդհանուր մուտքերի մեծ մասը՝ դարձյալ «Արցախ» ծրագրին

Հոկտեմբերի 27-ին Երեւանում տեղի ունեցավ «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի տարեկան հաշվետու 6-րդ նիստը, որտեղ կայացան մի շարք որոշումներ եւ քննարկումներ: Այս առթիվ հիմնադրամի գործադիր վարչության տնօրեն Մանուչակ Պետրոսյանը երեկ՝ նոյեմբերի 1-ին, հրավիրել էր մամուլի ասուլիս՝ տեղեկացնելու նիստի հետագա աշխատանքներին, հիմնադրամի գործունեության եւ զարգացման հեռանկարներին:

Տիկին Պետրոսյանը նշեց, որ հիմնադրամը, ինչպես նախորդ տարում, այս տարի եւս որոշում է կայացրել ընդհանուր մուտքերի մեծ մասն ուղղել «Արցախ» ծրագրին: Առանձնացնելով Գորիս-Ստեփանակերտ ավտոճանապարհաշինարարության կարեւորությունը, նշվեց, որ շահագործման է հանձնված ճանապարհի 5,5 կմ-անոց առաջին հատվածը, վերանորոգված է Աղավնու գետի կամուրջը, հողային աշխատանքներ են տարվում ճանապարհի մոտ 50 կմ-ը ընդգրկող երեք հատվածներում, որը ասֆալտապատման համար պատրաստ կլինի գարնանը: Այդ շինությունն իրականացնում է Գորիսի «Զանգեզուր» եւ Արարատի ճանապարհաշինարարական կազմակերպությունը: 1996-97-ին նախատեսվում է նաեւ ասֆալտապատման համար պատրաստ հողային պաստառը հասցնել մինչեւ Շուշի, ասֆալտապատել երկրորդ 13,5 կմ-անոց հատվածը:

Հիմնադրամը նախատեսել է նպատակային ծրագրեր առաջարկող կազմակերպություններին ու անհատներին հորդորել, որպեսզի իրենց ծրագրերն իրականացնեն աղետի գոտում, քանի որ շատ անհատներ եւ կազմակերպություններ ցանկություն ունեն ոչ միայն դրամ հատկացնել, այլեւ որ այդ գումարները հստակ ուղղվեն կոնկրետ ծրագրի իրագործման համար:

Հիմնադրամը որոշում է կայացրել հետեւողական աշխատանք տանել 1988-ից հետո սփյուռքահայ համայնքներում աղետի գոտու համար հավաքված գումարները հիմնադրամի միջոցով «Աղետի գոտի» ծրագրին հատկացնելու ուղղությամբ: «Այսօր հանցագործություն է այդ գումարները պահել, սառեցնել, քանի որ տարեցտարի շինարարությունը թանկանում է», ասաց տիկին Պետրոսյանը: Հիմնադրամի նպատակներից է նաեւ բարեփոխել եւ զարգացնել հիմնադրամի տեղական կառույցները՝ դրանք ավելի գործնական դարձնելու եւ ավելի լայն զանգվածներ ներգրավելու համար:

Նշվեց նաեւ, որ նոյեմբերին կրկնակի նպաստ կվճարվի զոհված եւ առաջին կարգի հաշմանդամ ազատամարտիկների երեխաներին, ինչպես այդ արվել էր սեպտեմբերին:

ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ

Մարդկանց առողջությունը կլինի բժիշկների վարձատրության չափանիշը

ՀՀ առողջապահության նախարար Արա Բաբլոյանը նոյեմբերի 1-ի մամուլի ասուլիսի ժամանակ լրագրողներին ներկայացրեց առողջապահության բնագավառում ներդրվող հերթական բարեփոխումների ծրագիրը, որը կոչվում է առողջության առաջնային պահպանման հիմնական ծրագիր: Նախարարի ասելով, ծրագիրը մեծ արժեւորում ունի ամբողջ աշխարհում, եւ բոլոր երկրները ձգտում են ներդնել այն, այլ հարց է, թե ինչ արագությամբ եւ ինչ հնարավորությամբ են կարողանում հասնել դրան: Ծրագրի էությունն այս է՝ ձգտել առողջ պահել մարդկանց, որն ավելի ճիշտ է եւ արդյունավետ, քան հետագայում հիվանդին բուժելը:

Հոկտեմբերի 1-ից կիրառման ներկայացված այս ծրագրի հիմնական գործող անձինք տեղամասային կամ ընտանեկան բժիշկներն են, որոնց վարձատրությունը պայմանավորվելու է նրանց խնամած մարդկանց քանակով եւ առողջական վիճակով: Նախարարի ասելով, ընդհանուր պրակտիկայի բժիշկների վարձատրությունն ավելի կբարձրանա, եթե իր խնամած մարդկանց ավելի առողջ պահի եւ նկատելի կիջնի՝ եթե նրանք հաճախակի հիվանդանան: «Ի տարբերություն նախկին հիվանդանոցային ծեսի, երբ փողը տրվում էր հիվանդին բուժելու համար, այստեղ պետք է կարողանանք ավելի շատ մարդկանց առողջ պահել», հայտնեց նախարարը:

Այդ ուղղությամբ նախարարության կատարած առաջին քայլը պրն Բաբլոյանը համարեց հոկտեմբերի 1-ից տեղամասային բժիշկների աշխատավարձի բարձրացումը, դրանով փորձելով նրանց կապել մարդկանց հետ, իսկ բուն մեխանիզմը կսկսի գործել հաջորդ տարվանից:

«Ընտանեկան բժիշկն ամբողջությամբ պատասխանատու կլինի այդ ընտանիքի անդամների առողջության պահպանման համար», նշեց պրն Բաբլոյանը, համոզված լինելով, որ այս մեխանիզմը կգործի Հայաստանում:

Ս. Պ.

ԵՐԵՎԱՆ

Մայրաքաղաքում ջեռուցումը կսկսվի նոյեմբերի 30-ին

ԵՐԵՎԱՆ, 1 ՆՈՅԵՄԲԵՐ. ԱՐՄԵՆ-ՊՐԵՍ: Մայրաքաղաքում նոյեմբերի 30-ին կսկսվի ջեռուցման սեզոնը: Այս տարի կենտրոնական ջեռուցման մեջ կընդգրկվեն նաեւ 16 առողջապահական օբյեկտներ:

Նոյեմբերի 1-ին քաղաքապետարանում տեղի ունեցած օպերատիվ շտաբի առաջին նիստում կոմունալ տնտեսության բաժնի պետ Ռոբերտ Նազարյանը համապատասխան հանձնարարականներ տվեց ջեռուցման ձեռնարկությունների ղեկավարներին մինչեւ նոյեմբերի 25-ը ավարտել բոլոր նախապատրաստական աշխատանքները: Նշվեց, որ այն 1368 շենքերը, որոնք ջեռուցվել են անցած տարի, գտնվում են բավարար վիճակում եւ կարիք չունեն վերանորոգման: Ըստ բաժնի պետի, այժմ կառավարությունում քննարկվում է մեկ խորանարդ մետրի ջեռուցման համար նախատեսված 1410 դրամը 1000-ի իջեցնելու հարցը, որը, բնականաբար, դրական լուծում կստանա:

Քննարկվեց նաեւ սանմաքրման կայանների ձմռան նախապատրաստման հարցը: Նշվեց, որ այդ նպատակի համար նախատեսված գումարներն ամբողջությամբ կտրամադրվեն այդ կայաններին համապատասխան մեխանիզմներ ձեռք բերելու, ապա կլորացման եւ այլ նորոգումների համար:

«3Ի-Ի» ԳՈՐԾ

«Դատավարական գործընթացների փոփոխությունը պայմանավորված է իրավիճակի փոփոխությամբ»

Հանրությանն արդեն տեղյակ է, որ «Վահան Հովհաննիսյան+30» գործով ամբաստանյալ ՀՅԴ Գերագույն մարմնի անդամ Վահան Հովհաննիսյանը անժամկետ հացադուլ է հայտարարել, որին միացել են նաեւ Նուբարաշենի թիվ 1 մեկուսարանում պահվող մյուս ամբաստանյալները: Քաղբանտարկյալների պաշտպանության խորհրդի կողմից նոյեմբերի 1-ին հրավիրված մամուլի ասուլիսում «Վահան Հովհաննիսյան+30» դատավարությունները սովորական քրեական գործեր են, առավել եւս իրենց վարքագծով հակառակն են ապացուցում», նշեց փաստաբանը: Իբրեւ ապացույց ներկայացրեց նախագահական ընտրությունների ընթացքում դատավարությունների ընդհատումը, որը քաղաքական նկատառումներով էր պայմանավորված: Իրավական տեսակետից փաստաբան Տիգրան Ջանոյանը ներկայացրեց, որ ոչ առողջապահական ծառայությունները, եւ ոչ էլ Կարմիր խաչի միջազգային կոմիտեն դեռեւս չեն այցելել նրան, այժմ հացադուլը չի վերահսկվում համապատասխան ծառայությունների կողմից: Վ. Հովհաննիսյանի հոգեբանական վիճակը տեղեկացրեց, թե բանտապետը հորդորում է նրան դադարեցնել հացադուլը, փոխարենը խոստանալով արագ դատավարություններին մասնակցելու: Հակառակ դեպքում կկիրառեն ահաբեկիչ միջոցներ եւ դատարան կտարվեն ձեռնաշղթաներով:

Փաստաբան Ջանոյանը հայտնեց, թե դատավարության ընդհատումների պատճառը վերլուծելով իրավական նկատառումից, հանգել են այն եզրակացության, որ դատական կոլեգիան այս գործով լուրջ խնդիրների առջեւ է կանգնած, դատարանն էլ չի ցանկանում «այս անհարկի ձգձգումները ու ընդհատումները»: Սակայն հարցն այն է, որ «Դրոյի» եւ «Վահան Հովհաննիսյան+30»-ի գործով ոչ մի օրենք չի նախատեսում «անորոշ ժամանակով դատավարության ընդհատում» հասկացությունը: «Երբ անորոշություն կա, ապա գործի քննությունը պետք է կասեցվի որոշմամբ», հայտնեց պրն Ջանոյանը:

Իսկ երբ այդպես չեն վարվել, ուրեմն հետեւությունն այն է, որ նախագահական ընտրություններին զուգահեռ իշխող վարչախմբի համար անցանկալի էին քաղաքական դատավարությունները: Հանրապետությունում ստեղծված հետընտրական իրավիճակը, փաստաբանի կարծիքով, դարձյալ նպաստավոր չէ այս դատավարությունների համար, ուստի այն կրկին ընդհատվեց: «Դրոյի» եւ «Վահան Հովհաննիսյան+30»-ի դատավարությունները պրն Ջանոյանի անկյունից փորձություն էին Հայաստանի արդարադատության իրականացման ողջ համակարգի եւ, հատկապես, Գերագույն դատարանի համար, որը չդիմացավ փորձությանը:

Անձնապես դեմ լինելով պայքարի այդ ծայրահեղ միջոցին՝ հացադուլին, այնուամենայնիվ, փաստաբանը գտնում էր, որ դա սպասելի էր: Նրա կարծիքով, պայքարի այդ ձեւն ընդունելի է նորմալ իրավիճակում, երբ ճգնաժամ չկա, մինչդեռ պայմանները մեծ է պայմանավորված միայն ճգնաժամային առանձնահատկություններով: Իրավիճակի ստեղծման առումով նա նշեց, որ իշխանությունը միայն դատավարական միջոցներով հանդես գալով, թե հարցը պայմանավորված է հանրապետության իրավիճակի փոփոխությամբ, եւ դա նաեւ փոփոխություն կբերի դատավարական գործընթացների համար:

Վահան Հովհաննիսյանի հասարակական պաշտպանի կողմից էլ ավելացվեց նաեւ չեզոքության մասին տված ՀՀ նախագահի հարցազրույցը, «որում նա խոստովանել է, որ այդ մարդկանց որպես պատանդ են պահում նրանց ճակատագիրը պայմանավորելով ընդդիմության վարած քաղաքականությամբ»:

Քաղբանտարկյալների պաշտպանության խորհուրդն այդ առթիվ արված իր հայտարարությամբ ստեղծված իրավիճակի վրա է հրավիրում հանրապետության բարձրագույն ղեկավարության ուշադրությունը, հիշեցնելով պատասխանատվության մասին եւ կոչ անելով ամենայն մեղմացման ձեռնարկել իր ժամանակին: «Հացադուլ հայտարարած ամբաստանյալների կյանքի պատասխանատվությունն ամբողջությամբ ընկնում է հանրապետության Գերագույն դատարանի վրա», ասված է հայտարարության մեջ:

ՍԱՄՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Փորձ է արվում միավորել հասարակական կազմակերպությունների ջանքերը հասարակության խնդիրների լուծման գործում

ԵՐԵՎԱՆ, 1 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Կառավարական, ոչ կառավարական եւ միջազգային կազմակերպությունների հարաբերությունները դարձան Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի նիստի մասնակիցների սուր քննարկման առարկան, որին ներկա էին ոչ կառավարական 14 կազմակերպությունների, ինչպես նաեւ Հայաստանի կառավարության աջակցությամբ ՄԱԿ-ի ծրագրի շրջանակում ստեղծված ժողովրդավարության եւ մարդկային իրավանց կենտրոնի ներկայացուցիչները:

Ինչպես նշեց Սախարովի անվան առաջընթացի, մարդկային իրավանց եւ գրության հայկական ֆոնդի նախագահի տեղակալ, ԳիԱրԲՄի հասարակական-քաղաքական կազմակերպության խորհրդի անդամ Աղասի Արշակյանը, միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող շատ կազմակերպությունների գործունեությունը, որ ուղղված է բնակչության քաղաքացիական իրավունքների լուսաբանմանը, գտնվում է իրականությունից խզված վիճակում: Ա. Արշակյանը գտնում է, որ այլալ հարցում տեսությունը անհրաժեշտ է զուգահերել գործնականի հետ: Իսկ դրա համար, նրա խոսքերով, անհրաժեշտ է հասարակական կազմակերպությունների իրական անկախություն, որովհետեւ հաճախակի են այն կորչում գրանտների եսեւից վազքարշավում: Այն բանի վառ ապացույցը, որ կազմակերպությունների մեծ մասը, որոնք հանուն ժողովրդավարության պայքարը իրենց կարգախոսն են հռչակել, անկախ չեն, նրա կարծիքով, սեպտեմբերի 25-ի հայտնի դեպքերի վերաբերյալ դրանց լիակատար լռության փաստն է:

Այդ հարցի հետ կապված Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի նախագահ Գեւորգ Պողոսյանը նշեց, որ, իր գնահատմամբ, Հայաստանի ոչ կառավարական կազմակերպությունների ավելի քան 70 տոկոսը միանգամայն անկախ չէ:

Նիստում քննարկվեց նաեւ փախստականների հարցերով զբաղվող մի շարք կազմակերպությունների եւ Հայաստանում ՄԱԿ-ի փախստականների հարցերի գերագույն կոմիսարիատի վարչության (ՓԳԳԿՎ) հարաբերությունների հարցը:

Որոշ կազմակերպությունների ներկայացուցիչների պնդմամբ, Հայաստանում ՓԳԳԿՎ գործունեության հինգ տարիներին ստեղծվել է աննախադեպ իրադրություն, երբ փախստականների հետ աշխատանքի փորձ ունեցող կազմակերպությունների կողմից ՄԱԿ-ի ՓԳԳԿՎ ներկայացված ծրագրերը մերժվում են առանց բացատրության եւ հիմնավորման: Իսկ ֆինանսական աջակցություն ցուցաբերվում է համաձայն ծրագրերի, որ ներկայացնում են վերջերս ստեղծված կազմակերպությունները:

Սոցիալական պաշտպանության, զբաղվածության, բնակչության տեղաշարժի եւ փախստականների հարցերի նախարարության տեղաշարժի վարչության պետ Լիլի Կարապետյանի խոսքերով, ՄԱԿ-ի ՓԳԳԿՎ-ն, ի դեմս գերագույն կոմիսար պրն. Ռոբինսոնի, լուծում է փախստականների ինտեգրացման, զբաղվածության եւ այլ հարցերի հետ կապված կարեւորագույն խնդիրներ՝ հաշվի չառնելով իրենց իսկ փախստականների եւ նրանց ներկայացնող հասարակական կազմակերպությունների կարծիքը, մոռանալով, որ ոչ թե փախստականները գոյություն ունեն ՓԳԳԿՎ-ի գործունեության ծավալման համար, այլ ՓԳԳԿՎ փախստականների խնդիրների լուծման համար:

Ամփոփելով խորհրդակցության արդյունքները, որոշում ընդունվեց այն դարձնել պարբերական, ինչպես նաեւ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել հանրապետության հասարակական կազմակերպությունների գործունեության տեղեկատվական շրջափակումը ճեղքելու համար: Նշվեց հասարակական կազմակերպությունների ջանքերի միավորման անհրաժեշտությունը հասարակության գոյության խնդիրների լուծման համար:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հիմնադիր եւ հրատարակիչ՝ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
հեռ. 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ / հեռ. 521635
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍՅԱՆ / հեռ. 562863
A STYLE համակարգչային ծառայություն / 581841
Apple Macintosh
համակարգչային սարքավորումը «Ազգ» թերթի
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone 521635
47 Hanrapetutian st.
Yerevan, Armenia, 375010

ԱՍՈՒԼԻՍ

Ամերիկացիներն ուրախանում են Հայաստանի տնտեսական աճով եւ... ավելացնում մարդասիրական օգնությունը

«Տաք ճաշը» նավթի ծրագիրը կշարունակվի

Երեկ, ՀՀ կառավարության նիստերի դահլիճում մամուլի ասուլիս անցկացրին ՀՀ սոցապնախարար Ռաֆայել Բագոյանը եւ մեր երկրում ԱՄՆ-ի արտակարգ ու լիազոր դեսպան Պիտեր Թոմսոնը:

Ասուլիսը վարում էր ՀՀ կառավարության մամուլի ծառայության ղեկավար Մարտին Հովհաննիսյանը, ով նշեց, թե «լրագրողներին հանդիպելու նպատակը «Տաք ճաշ» ծրագրի կատարման խնդիրներն եւ ժամանակը մեր ժողովրդին ընկալելի դարձնելն է»:

Պրն Բագոյանն իր խոսքում ընդգծեց, որ 1996-1997 թթ. ձմռանը Հայաստանին մարդասիրական օգնության, այդ թվում մոտ 20 հազար տոննա նավթ տրամադրելու իրականացվում է ընթացիկ տարում մեր երկրի համար ԱՄՆ-ի կառավարության նախատեսած 80 միլիոն դոլարի օգնության գումարների հաշվին: Միայն այդ նավթի արժեքը շուրջ 5,5 միլիոն դոլար է: ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալությունն արդեն գնել եւ ամբողջությամբ Հայաստան է հասցրել նավթի ողջ քանակությունը, այն պահեստավորվել եւ վերահսկվում է ժողովրդավարության եւ զարգացման հիմնադրամի կողմից: Նախատեսվում է 4000 տոննա նավթ տրամադրել մեր շուրջ 1400 դպրոցներին, խմ միացած 16 հազար Գյումրիի, Վանաձորի, Ստեփանավանի, Սպիտակի եւ երկրաշարժի գոտու մյուս քաղաքների կարիքավորներին:

Ըստ լրագրողներին նախապես բաժանված փաստաթղթային տվյալների, աղետի գոտու ժամանակավոր կացարաններում (փայտե տնակներում) բնակվող ընտանիքները կստանան 120 լիտր նավթ՝ լիտրը 5 դրամով, միայնակ թոշակառուները կստանան 100 լիտր նավթ՝ լիտրը 15 դրամով, մյուս կարիքավորներին, ըստ «Փարոս» ծրագրի սահմանված կարիքավորության աստիճանների, կտրամադրվի 80 եւ 60 լիտր նավթ, դարձյալ 15 դրամով:

Անցյալ տարվա նույնանման փոփոխությունն այն է, որ նավթ կբաշխվի նաեւ Երեւանի եւ Գյումրիի դպրոցներին:

Իր խոսքում պրն Բագոյանը նշեց, որ այսօրվա ծրագիրն իրականացվում է արդեն 4-րդ անգամ, ընդ որում, յուրաքանչյուր դեպքում դրան նախորդում են տեւական, սարի-սարիկես տեղի բանակցություններ, «համատեղ բուռն աշխատանք ժողովրդավարության զարգացման հիմնադրամի հետ»:

Նախարարն ակնհայտ գոհունակությամբ տեղեկացրեց, որ ԱՄՆ-ի կառավարությունն իր 1997 թ. բյուջեում նախատեսել է 10 միլիոն դոլարով ավելացնել Հայաստանին ցույց տրվող մարդասիրական օգնության ծավալները, հասցնելով 95 միլիոնի, որի հաշվին կիրականացվեն հացահատիկի մատակարարման, գազի ներկրման, առողջապահության եւ դպրոցի, դպրոցական համակարգի աջակցման, բնակչության օգնության եւ մի շարք այլ ծրագրեր: Ընդհանուր, նախարարը «շեշտեց», թե «մենք ավելի կարող էինք օգնության ծավալների կրճատում», բայց ահա, ինչպես տեսնում ենք, հակառակն է:

«Ազգի» թղթակցի հարցին, թե «ինչո՞ւ էին կրճատում ակնկալում», պրն Բագոյանը պատասխանեց, որ «դա բնական պրոցես է, մարդասիրական օգնությունը ժամանակավոր բնույթ է կրում: Դա նորերը տարեցտարի անցնում են հիմնականում զարգացման ծրագրերի հովանավորման»: Իբրեւ օրինակ նշեց, որ Եվրամիությունն անցյալ տարվա 20 միլիոն դոլարի մարդասիրական օգնության փոխարեն այս տարի կտրուկ նվազեցրել է այդ գումարը, հասցնելով 6 միլիոնի, եւ դա «ոչ միայն Հայաստանի նկատմամբ է այդպես, այլ ընդհանուր մոտեցում է»:

Հայաստանում ԱՄՆ-ի արտակարգ եւ լիազոր դեսպան պրն Թոմսոնը հավելեց, թե երեք մեր երկրի բնակչության մի զգալի մասի սոցիալական ծանր վիճակի լավացման ակնկալությամբ: Գոհունակությամբ արձանագրելով, որ Հայաստանում նկատվում է տնտեսական 5 տոկոսի աճ, նա միաժամանակ զգուշացրեց, որ 37 հազար ընտանիքներ դեռեւս խիստ կարիքավոր են, 15 հազար դասասենյակներ չեն ջեռուցվել, եւ իր կառավարության անունից հավաստիացրեց, որ Միացյալ Նահանգները կշարունակի Հայաստանի ժողովրդին ցուցաբերվող «ամեն աջակցությունը»: Պարոն դեսպանի լավատեսությունը նախարար Բագոյանին առիթ տվեց կատակով նկատելու, որ պրն Թոմսոնը «հանդես եկավ ոչ թե որպես դեսպան, այլ որպես մեր նախարարության աշխատակից»: Նախարարը դեռ ավելացրեց «մեր բոլոր ծրագրերը, հուսով ենք, սոցիալական բնագավառի ընկալելի առումով»:

Ասուլիսի վերջում յախզագնաց ցնծվեց, նախարարը եւ դեսպանը փոխադարձ սիրալիրություններ էին շռայլում, գերագնահատելով միմյանց դերը: Սա ընդգծում եմ ամենայն զգուշությամբ, պարոն Թոմսոնին եւ նրա կառավարության աշխատակիցներին հանդեպ խորը երախտագիտություն զգալով, եւ հենց այս «Տաք ճաշ» ծրագրի կատարողությամբ, որ, ինչպես պարզվեց մամուլի ասուլիսում, հրավիրված ԱՊՀ երկրներից միայն Հայաստանի նկատմամբ, մյուս ոչ մի երկրի նավթի օգնություն չի տրվում:

Այնուամենայնիվ, դառնության զգացումը մնում է, դեռ նախ՝ ճաշ չստանալով այլոց ողորմած մարդասիրական օգնություններին հավելյալ ի՞նչ է «ժամանցել», ի՞նչ ենք խոսք յոլ «Հայաստանի տնտեսական աճի» իրական պտուղները...

ՍԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տիգրան Սարգսյան. «Մասնավոր հատվածի զարգացումը տնտեսության զարգացման երաշխիքն է»

Երեկ, նոյեմբերի 1-ին, «Ազատ ձեռնարկատիրությունը Հայաստանում. հիմնահարցեր եւ դժվարություններ» զեկույցի ընթերցմամբ, Քաղաքացիական ֆորումը եզրափակեց 1996-ի իր ծրագիրը, որը սկսվել էր դեռ դեկտեմբերին եւ որի ընթացքում լսվել է 22 դասախոսություն: Հիշեցնենք, որ ծրագիրը, որտեղ շոշափվել են մեր հանրապետության համար առավել կարեւոր խնդիրները («Քաղաքացիական հասարակություն», «Ազգային համաձայնություն», «Կայուն զարգացում» թեմաների շուրջ) հնարավոր է եղել իրականացնել Ֆ. Էբերտի հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության օժանդակությամբ: Ու թեեւ յուրաքանչյուր դասախոսություն եւ նրան հաջորդող քննարկում միշտ էլ եղել են քաղաքագետների, գիտնականների, փորձագետների եւ մամուլի ուշադրության կենտրոնում, այնուամենայնիվ, ինչպես նշեց Քաղաքացիական ֆորումի նախագահ Սուրեն Զոլյանը, «ծրագիրը չհասավ իր նպատակին, քանզի հեղինակությունների կողմից նշված կարգախոսներ որոշակի չափով գործնականում որեւէ տեղ գտավ, գործնականում որեւէ ներդրում չկայացավ»: Բացի այդ, պարոն Զոլյանի վկայությամբ, հնարավոր չեղավ ստեղծել երկխոսություն իշխանությունների, հասարակության եւ գիտնականների միջեւ, ինչը նույնպես 1996-ի ծրագրի նպատակներից էր: «Ցավոք, մինչ օրս դեռ ոչ մի իշխանավոր ներկա չի գտնվել մեր սեմինարներին, մինչդեռ քննարկվող հարցերը՝ տնտեսական, սոցիալական ոլորտներում, ինչպես նաեւ արտաքին հետ կապված խնդիրը, համահայկական բնույթի են», նշեց Սուրեն Զոլյանը:

Ըստ էության երեկվա զեկուցողը՝ Հայաստանի բանկերի ասոցիացիայի նախագահ, ՄԱԿ-ի ազգային փորձագետ Տիգրան Սարգսյանն էր: Միանգամից նշենք, որ «բուր ծեծող» չկար եւ հարուստ տեղեկատվությունը (վերլուծության առանձին դրվագներով) յափշտակել էր 20-25 ունկնդիրների [illegible]:

Ըստ երեւույթին, դա միակ բացթողումն էր, քանզի շոշափվող հսկայական ժամանակագրական ինտերվալը, ներդրումների եւ նույնքան մեծ կառուցվածքային, ֆինանսական եւ այլ տեղեկատվության մասին խոսելը երեւի թե պահանջում էր առնվազն երկու դասախոսություն: Նկատողությանս միակ առիթը այն է, որ ներկայացված զեկույցը շատ լուրջ բնույթի էր եւ հագեցված էր [illegible] գործոններով: Տիգրան Սարգսյանը խոսում էր տնտեսության մասնավոր հատվածի զարգացման խնդիրների շուրջ, ընդգծելով նրա «հայաստանյան էվոլյուցիայի» երկու փուլ՝ 1987-91 թթ. եւ 1991-96 թթ.: Բերված ցուցանիշները վկայում էին մասնավոր հատվածում արձանագրված կառուցվածքային (արտադրողական ոլորտից առաջին փուլում դեպի սպասարկման ոլորտ եւ երկրորդում), իրական (դաշտի բացակայությունը առաջին փուլում եւ օրենքների ընդունումը երկրորդում), ֆինանսական եւ այլ փոփոխությունների մասին:

Զեկուցողը, խոսելով տնտեսության մասնավոր հատվածի զարգացումը խոչընդոտող գործոնների շուրջ, նշեց օրինակով (անկայուն տարածաշրջան, [illegible]) [illegible] վրա: Պարոն Սարգսյանը, մասնավոր [illegible], նշեց, որ այն այսօր վտանգված է: Նրա կարծիքով, մեր հանրապետությունը դեռ 1990-ին մինչ [illegible] իր տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները (այսինքն ո՞ր արտադրությունը, կամ ավելի լայն առումով զբաղվածության ո՞ր ոլորտը զարգացնել եւ որը վերացնել՝ ոչ նպատակահարմար լինելու պատճառով): Մինչդեռ, այսօր երբ 33 կառավարությունը նոր է միայն լրջորեն նստում այդ հիմնահարցերի վերծանման, պարզվում է, որ 1996-ի մակրոտնտեսական ցուցանիշները փաստորեն չեն ներառում [illegible] նոր երկրներին կասարել ակնկալիք ներդրումները:

ԱՐԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՄՆ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Ձայնդ տուր միայն Դոուլին, թեկուզ նա չհաղթի

Նամակ ամերիկահայությանը

Ազատ, անկախ եւ միացյալ Հայաստանի արքաքան գաղափարը թե մայր հայրենիքում եւ թե սփյուռքում ամեն մի հայորդու բաղձալի երազանքն է: Այն բացարձակապես կապ չունի որեւէ կուսակցության, որեւէ անհատի (անկախ վերջինիս դիրքից, դեմքից եւ գրպանից) կամ կազմակերպության հետ: Այն ամենը, ինչ ժողովրդական է, նրա տերը ժողովուրդն է: Հայ դատը հայ ժողովրդի համազգային դատն է, Հայոց ցեղասպանության ճանաչումը նրանից բխող միջազգային եւ իրավական բոլոր հետեւանքներով: Պատմակա՞ն են ամերիկյան քաղաքապետերի գործիչները Հայ դատը (նախկինում Հայկական հարցը) 1924 թվականից ԱՄՆ-ի պրեզիդենտ Թ. Վիլսոնի մահից հետո մինչեւ օրս-էլ, ոչ ոք չի հիշում. եթե հիշվեն, ապա միայն նախկին էմիսարներ եւ դիվանագետներ (Ջանկին Սեյրուս, Մորգենթաու), վերջին ժամանակներում Ռոբերտ (Բոբ) Դոուլ, Էդվարդ Քենեդի եւ այլ սենատորներ, կոնգրեսականներ, գիտության եւ մշակույթի գործիչներ, որոնց ձայնը եւ ազնիվ հարցադրումները խեղդվել է, սառեցվել ամերիկյան թուրքամետ քաղաքականության եւ փառամոլության ծնունդ տակ... Ռեյգանը, Բուշը, Քլինթոնը ե՞րբ են Հայ դատը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը ԱՄՆ-ում, ՄԱԿ-ում կամ այլուր դարձրել (ինչպես Վիլսոնը Սեւրում) լուրջ քննարկման հարց եւ պաշտպանել այն, իրենց մանդատը սպել հայ ժողովրդի օգտին: Նրանց նախագահ ընտրվելու ժամանակ ամերիկահայությունը ինչպես եւ ում կանչել է տվել է իր ձայնը: Իսկ հիմա՞... Թե ինչ սեւ կատու է անցել Ամերիկայի Հայ դատի խորհրդի արանքով, մեզ պարզ չէ, ավելի ճիշտ՝ ի՞նչ ասել է խորհրդավոր ես բուն երկրի նախագահի հայաստանյան քաղաքականությունից եւ կոչ անես հայրենակիցներին ձայնը տալ Ամերիկայի թուրքամետ նախագահի օգտին ընդդեմ Հայ դատի (եւ նրա մասը կազմող Արցախի) այսօրվա պաշտպան Բ. Դոուլի: Չէ որ խաղ տարուց ավելի, երբ ԱՄՆ-ում կամ միջազգային ինչ-որ ատյաններում քննարկվել է հայացեղասպան թուրքին (Օսմանյան Թուրքիային) միջազգային դատապարտելու հարցը, Բոբ Դոուլը իր համախոհ սենատորների եւ կոնգրեսականների թիկունքին կանգնած զորավիգ է եղել Հայ դատին, պետական, պատմական փաստերով ճշմարտել հայ ժողովրդի նկատմամբ 1915 թ. կիրառված ցեղասպանությունը, 2 միլիոն հայերի ջարդն ու բռնագաղթը իրենց պատմական բնօրրանից, հրապարակավ, թերթով, հեռուստատեսությամբ, ռադիոյով ԱՄՆ-ում եւ ողջ աշխարհում պահանջել, որպեսզի Թուրքիան ճանաչի Հայոց ցեղասպանությունը: Եթե մենք այսօր, այս վճռորոշ պահին չլինենք նրա թիկունքին, ուրացում, ազնիվ մարդուն եւ միջազգային քաղաքագետին, վաղը ինչպես ենք նայելու նրա եւ մեր Դատը այսօր պաշտպանող օտարազգի մյուս պետական, քաղաքական եւ մշակութային գործիչների աչքերին: Արդյոք մեզ կներեն Մորգենթաուի եւ Լեփսիուսի, Բրյուսովի եւ Գեմբարակի, Ռայնի եւ Գլադստոնի թոռներն ու ծոռները: Արդյոք բուլղարուհի կինոգործիչ Ցվետանա Պասկալեւան եւ Անգլիայի լորդերի պալատի փոխնախագահ Բեռոնյան Քոկսը, ռուս ժամանակակից գրողներ, Ռուսաստանում «Ղարաբաղ» միության անդամներ Վ. Օսկոցկին, Ա. Նույկինը չե՞ն հիասթափվի մեր ժողովրդից... Ինչո՞ւ եք դեմ գնում խղճի եւ բանականության ձայնին, պարոններ: Հայ դատի անունից միայն հայ ժողովուրդն ու հայոց նորանկախ պետականությունն իրավունք ունեն խոսելու եւ պահանջելու: Չեմ կասկածում կգա այդ օրը...

Հետաքրքիր է, այդ ո՞ր ապրիլի 24-ին է Բիլ Քլինթոնը լիլիբացել Հայոց Մեծ Եղեռնի զավակի: Նա ե՞րբ տեր չի կանգնել բուրժական այն բոլոր քաղաքական խաղերին, կեղծիքներին եւ սադրանքներին, սկսած Հայոց ցեղասպանության յոթանասունից, վերջացրած Թուրքիայի եւ Ադրբեջանի այսօրվա Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների տնտեսական, ռազմական, քաղաքական շրջափակումով: Ի՞նչ է այսօր բարեփոխում Հայաստանից հետո «Վաշինգտոն փոստը», որտեղ [illegible] ամերիկյան քաղաքականությո՞ւնն է: 1995 թ., Մեծ եղեռնի 80-ամյա սգո տարեդարձին Ռուսաստանի Պետական Դուման ճանաչեց 1915-ին Օսմանյան Թուրքիայի կողմից հայ ժողովրդի նկատմամբ կիրառված ցեղասպանությունը, ասել է Հայ դատը: Իսկ Ամերիկա՞ն (ԱՄՆ-ը): Երբ Վիլսոնի նման Քլինթոնն իր մանդատը կտա Հայաստանի օգտին, ԱՄՆ-ը կճանաչի Հայոց ցեղասպանությունը եւ կպաշտպանի ոտնահարված թուրքին, այն ժամանակ ես էլ Հայաստանից կհորդորեմ «Սիրելի ամերիկահայ եղբայրներ եւ քույրեր, ձեր ձայնը տվեք Քլինթոնին»:

Իսկ առ այժմ, մինչ հայդասականներն իրենց ձայնը կտան պրն Քլինթոնին, կուզենայի նրանց հարց տալ, թե ինչո՞ւ նա եւ ամերիկյան իշխանությունները մինչեւ օրս չեն ճանաչում նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, դեմոկրատական եւ օրենսդրական հիմունքներով ստեղծված նրա ինքնավարությունը, նրա քաղաքական, պատմական իրավունքները, երբ իրոք ժողովրդավար են, խաղաղասեր, հարգում են ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի, Մարդու իրավունքների եւ 1948 թ. դեկտեմբերի 10-ի ցեղասպանության մասին ընդունած հիմնադրույթներն ու մշակված են երկիր մոլորակի ճակատագրով:

— Այսքան զգոն, այսքան ուժեղ, այսքան բարի «ամերիկյան հեղինակները» (սկսած Քլինթոնից, Քրիստոֆերից մինչեւ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի ներկայացուցիչները) ինչո՞ւ են հայ-ադրբեջանական հակամարտության կրակին իրենց բենզինը կաթ-կաթ ավելացնում... Ինչո՞ւ մի անգամ հայկական համայնքի ձայնն իր կողմ ունեցող Բիլ Քլինթոնը բարձրաձայն չի ասում. «Պարոններ Դեմիրել եւ Ալիեւ, ձեռք քաշեք Հայաստանից եւ Արցախից»: Եվ եթե 1915-ի սրածությունը շատ է հեռու այսօր Քլինթոնի տեսադաշտից, ապա գոնե ժամանակակից կինոհեռուստաարտերը նրան ցույց են տվել, թե Աբդուլ Համիդի, Թալեաթի, Էնվերի, Ջեմալի, դայակ Նուրու թոռները հայկական արյան ինչպիսի բաղնիք են սարքել Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում, Շահումյանում, Գետաշենում եւ այլուր, այսօր՝ խաներ դարավերջին սպանելով շուրջ 10000 հայորդիների: Ի՞նչ է Ամերիկյան հետախուզությունն եւ տեսաչ չունի, ո՞ւր են, ինչո՞ւ են լռում, խաբում, կեղծում եւ քաջերում նրա այսօրվա դիվանագետներն ու դեսպանները... Եվ երբ ԱՄՆ-ի քաղաքական շահերն ստիպում են Քլինթոնին Հայ դատի հանդեպ լռել, ապա հայդասականներն ինչո՞ւ են հարգում լծվել քլինթոնյան ընտրարշավին, նրա արած ո՞ր լավության, ո՞ր խաչության, քաղաքական, դիվանագիտական ո՞ր սխրանքի համար «Հայ դատը» թե ի՞նչ հույսեր է կապում ԱՄՆ-ի ներկայիս նախագահի հետ՝ չգիտեմ, միայն կցանկանայի, որ նա իր կուսակցական շահերը վեր չդասեր հայ ժողովրդի ընդհանուր շահերից: Որպես հայ գրող, ազգային պատմաբան եւ 20-րդ դարի քաղաքացի եւ ականատես այս ամենից պարզ տեսնում եմ ամերիկյան ներկայիս նախագահի սառը անտարբերությունը հայ ժողովրդի ոչ միայն դառը անցյալի, այլեւ ներկայի եւ վաղվա օրվա հանդեպ: Իրական մի բենզինը ամերիկացու (եւ Քլինթոնի) համար ավելի-թանկ արժե, քան ողջ քարքարոտ Հայաստանն ու եղեռնված հայ ժողովուրդը: Եվ մինչ ԱՄՆ-ի Կոնգրեսը կամ Սենատը կթողնի իր երկրի (եւ իր նախագահի) շահերը, դեմ կգնա Թուրքիային (ուր ռազմական բազաներ ունի) եւ Ադրբեջանին (որտեղից նավթի հոտ է առել)... միամիտ հայդասականներ... դեմոկրատները կհաղթեն ընտրություններում, թե հանրապետականները, դա թող այդ երկրի բուն տերերը, նրանց խիղճն ու ազնվությունը որոշեն... «Սիրիր հայրենիքը, թե քեզ հայրենի չի դառնա», գյոթեական այս ճշմարտությունը [illegible] եղբայր Մոնթեի, Ջիվանի, Թարոսի, Բեյրութ [illegible] հայոց հարցը, [illegible] Թուրքիան, [illegible] Դոուլը [illegible].

[illegible]

[illegible]

ԱԶԳ

Ղարաբաղի հայց

Ընթերցողն, իհարկե, խոսքը մտածում է, թե խոսքն այն տարածքների մասին է, որ «գրավել են» ղարաբաղցիները 1992-1994 թթ. ինքնապաշտպանական կռիվներում: Եվ նա մեղավոր էլ չէ, որ այդպես է դատում: Արդեն որերորդ տարին է, թուրքերն ու եվրոպացիները, ռուսներն ու ամերիկացիները, ԵԱՀԿ-ի պաշտոնական միջնորդները իրենց պաշտոնական փաստաթղթերում ու ոչ պաշտոնական զրույցներում «գրավված տարածքներ» հասկացությունը միանշանակ կիրառել են միայն մեկ իմաստով. ղարաբաղյան կողմը պետք է ազատի օրինականորեն Ադրբեջանի Հանրապետությանը պատկանող, բայց այժմ իր կողմից գրավված տարածքները: Պետք է նկատել, ա-

ված տարածքների խնդրում:

Բանն այն է, որ գրավված կամ օկուպացված տարածքների օրինական պատկանելության հարցը արծարծելիս խոսք կարող է լինել միայն Ադրբեջանական Հանրապետության կողմից նրան չպատկանող տարածքների օկուպացման մասին և ոչ թե հակառակը:

Ես բնավ նկատի չունեմ պատմական անցյալից վերցված փաստարկներ, հայ պատմաբանների ու քաղաքագետների բերաններում մաշված, բայց դիվանագիտական գործընթացներում արհամարհված այնպիսի փաստարկներ, որ վերաբերում են անցած-գնացած հայ պետականություններին, այդ տարածքներում սփռված պատմական հուշարձաններին և այլն, և այլն:

գախոր), որոնց վրա ինքը փաստական վերահսկողություն չունի: Եվ երկրորդ: Լիգան Արցախի մասին հարցը որպես վիճելի տարածքի հարց մտցրեց Փարիզի խաղաղության կոնֆերանսի օրակարգ:

Ինչպես Նախիջևանը, այնպես էլ Արևելյան Անդրկովկասի հայկական տարածքները չեն դիտվել իբրև Խորհրդային Ադրբեջանին պատկանող տարածքներ նաև Ադրբեջանի խորհրդայնացման ընթացքում: Ապացույցը դեռևս ոչ խորհրդային Հայաստանի Հանրապետության և արդեն խորհրդային դարձած Ռուսաստանի կառավարությունների միջև 1920 թ. օգոստոսի 10-ին կնքված համաձայնագիրը, որն ամրագրեց այդ տարածքները Խորհրդային Ադրբեջանին

կան մարմիններ չեն եղել:

Թող այդպես լինի: Բայց հենց այդ դեպքում Կավբյուրոյի որոշումը ձեռք է բերում միջպետական պայմանագրի ուժ, քանի որ այն իրականացվել է իբրև Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների և Կենտրոնի (նաև՝ Խորհրդային Ռուսաստանի) կողմից ընդունված որոշում (իրականում հուլիսի 5-ի որոշումը չի ընդունվել, քանի որ նույնիսկ չի քննարկվել ու չի դրվել քվեարկության, ի հետևանս որի օրինական ուժի դիտվի հուլիսի 4-ին հօգուտ Հայաստանի կայացրած որոշումը):

Բոլոր դեպքերում Խորհրդային Ադրբեջանի մեջ մտցված (կամ խնամակալությանը հանձնած) տարածքները չեն դիտվել իբրև բուն

րությունները նույնպես նրան զրկում է այդ տարածքների նկատմամբ որևէ հավակնության իրավունքից, քանի որ դրանք, ինչպես ցույց տվեցինք վերը, մաս չեն կազմել մուսավաթական ադրբեջանական հանրապետության:

Փաստորեն 1991 թ. օգոստոսից Բաքուն զրկված է նախկին ԱդրԽՍՀ հայկական տարածքների վրա իշխանություն ունենալու որևէ ներքին կամ միջազգային իրավական հիմքից: Դե յուրե այդ տարածքները նրան չեն պատկանում, և քանի որ այսօր միջպետական այն պայմանագրերն ու որոշումները, որոնցով այդ տարածքները հանձնվել են նախկին ԱդրԽՍՀ-ին, շարունակում են գործել, դենոնսացված չեն և ոչ էլ իրենց ուժը կորցրած նրանց

ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ

Գրավված տարածքները որպես ղարաբաղյան հակամարտության առանցքային խնդիր

Կամ վերջապես ե՞րբ պիտի ետ տրվեն գրավված տարածքները՝ ղարաբաղյան կնճռի արդար կարգավորման համար

Վաղուց ի վեր ինչ-ինչ նկատառումներով մեր արտաքին քաղաքական հաստատությունները (մեր ասելով ես հասկանում եմ թե Հայաստանի Հանրապետության, թե ԼՂՀ համապատասխան պետական կառույցները) չեն բողոքարկում դրսի կողմից բախման ընդհանուր պատկերի համար այնքան կարևոր այդ հասկացության նման կիրառությունը: Չի բացառվում, որ ինչ-որ փուլում դա կարող է արդարացված լինել: Համենայնդեպս նման հարցադրումը համաձայնելու պարագայում է, որ մեր իսկ կողմից առաջարկվել է «տարածքներ կարգավիճակի դիմաց» բանաձևը: Ասել է թե՝ ճանաչեք մեզ և մենք ետ կտանք ձեր տարածքները:

Անեն դեպքում թե մեզանում, թե դրսում գրավված տարածքների մասին բոլոր խոսակցությունների հիմքում ընկած է իր ինքնին հասկանալի այն գաղափարը, թե խոսքը օրինաբար Ադրբեջանական Հանրապետությանը պատկանող տարածքների մասին է: Բայց ոչ ոք չի ասում, թե այդ ո՞ր օրենքի, ո՞ր պայմանագրի համաձայն: Հարցը նույնիսկ չի քննարկվում, քանի որ թե դրսում, թե մեզանում (ուրեմն և մեր ջանքերով) տիրապետող է դարձել բախման այնպիսի մի պատկեր (ըմբռնում), ըստ որի այդ տարածքները Ադրբեջանին պատկանելը անկասկած ճշմարտություն է:

Ավելորդ է նկատել, թե հակամարտությունների կարգավորման գործընթացում ինչ նշանակություն ունի խնդրի պատկերը հանրային գիտակցության մեջ, երբ նույնիսկ այն պետք է լուծվի ոչ թե այդ պատկերի, այլ քաղաքական շահերի ու փոխզիջումների գնի վրա: Բախման պատկերը ձևավորվում է քարոզչությամբ՝ նպաստավոր բոլոր փաստարկների հստակ ու հանրամատչելի (այլ կերպ հանրային գիտակցության մեջ բախման կերպար չի ամրագրվում) ներկայացմամբ: Պետք է խոստովանել, որ ադրբեջանական կողմը հանրային գիտակցության մեջ բախման իր համար նպաստավոր կերպարի ձևավորման գործում անում է գրեթե անհնարինը, այն դեպքում, երբ մենք դեռ շարունակում ենք լռության մատնել մեզ համար նպաստավոր, միանշանակ մեր օգտին խոսող փաստարկները:

Եվ դա առաջին հերթին գրավված տարածքների մասին է:

Խոսքն այդ տարածքներին վերաբերող դեռևս գործող, չդենոնսացված բազմակողմ այն պայմանագրերի մասին է, որոնց տակ կան ինչպես Հայաստանի, այնպես էլ բախման հետ անմիջապես առնչվող և այժմ նրա կարգավորմանը մասնակցող մի շարք երկրների ստորագրությունները: Խոսքն այն պայմանագրերի մասին է, որոնք առաջին հերթին պետք է դրվեին բանակցությունների սեղանին որպես բախման ու տարածքային հարցերի կարգավորման իրավական հիմք, քանի որ մեր ընդդիմախոսները խոսում են տարածքների Ադրբեջանական Հանրապետությանը իբր թե հենց օրինաբար պատկանելու մասին:

Ինչի՞ մասին է խոսքը: Ես հնարավորին չափ համառոտ կշարադրեմ հարցը, քանի որ մամուլում արդեն քանիցս առիթ եմ ունեցել անդրադառնալու դրանց:

Իմ խնդիրն է հենվել միջազգային հանրության կողմից ընդունված հանրահայտ իրավական փաստերի ու փաստաթղթերի վրա և ցույց տալ, որ մեր օրերի Ադրբեջանական Հանրապետության կողմից օկուպացված են հսկայածավալ հայկական տարածքներ, որոնց վրա նա երբևէ օրինական իշխանություն չի ունեցել և այսօր էլ չունի:

Ահա այդ փաստերը:

Մինչև 1918 թվականը Արևելյան Անդրկովկասի հայկական տարածքները չէին կարող պատկանել Ադրբեջանական Հանրապետությանը, քանի որ նման պետություն գոյություն չի ունեցել: Այդ տարածքները չեն պատկանել նաև թուրքական ինտերվենցիայի արդյունքում ստեղծված 1918-1920 թթ. Ադրբեջանական Հանրապետությանը, որին նույնիսկ թուրքական կանոնավոր զորքերի օգնությամբ չհաջողվեց ընկճել արցախահայությանը և իր ինքնիշխանությունը հաստատել Արցախում: Այն, որ միջազգային հանրությունն Արցախը չի դիտել իբրև Ադրբեջանական Հանրապետության մաս, միջազգային իրավական գործընթացներում ստացել է համապատասխան ձևակերպումներ: Նախ Ազգերի լիգան 1920 թ. մերժել է Ադրբեջանական Հանրապետության դիմումը Լիգա ընդունվելու խնդրանքով, հատկապես նշելով, որ նա հավակնում է տարածքներ (նկատի էր առնվում Ար-

չպատկանելու փաստը, և այդ փաստի ճանաչումը:

Ինչպես Նախիջևանի, այնպես էլ Արևելյան Անդրկովկասի հայկական տարածքների հարցը չի դիտվել որպես Խորհրդային Ադրբեջանի ներքին հարց նաև Անդրկովկասի վերջնական խորհրդայնացումից հետո: Դրանք ԱդրԽՍՀ-ի խնամակալությանն են հանձնվել կամ նրա սահմանների մեջ մտցվել են բազմակողմ միջպետական պայմանագրերով և այդ գործում վճռական դերը խաղացել է Խորհրդային Ռուսաստանը, որը նպատակ ուներ «արտազգային», ինտերնացիոնալ Խորհրդային Ադրբեջանը դարձնել հզոր գործոն արևելյան իր երկրաքաղաքական ծրագրերում, մասնավորապես մուսուլմանական արևելքի սոցիալիստական հեղափոխության արտահանման համար:

Նախիջևանը վերջնականապես ԱդրԽՍՀ խնամակալությանն է տրվել 1921 թ. հոկտեմբերին, Կարսի պայմանագրով, որի տակ դրված են Թուրքիայի, Խորհրդային Հայաստանի, Խորհրդային Ադրբեջանի և Խորհրդային Ռուսաստանի ստորագրությունները:

Լեռնային Ղարաբաղը դեռևս մինչև ԽՍՀՄ կազմավորումը Խորհրդային Ադրբեջանի «սահմաններում է թողնվել» 1921 թ. հուլիսի 5-ին ՌԿ(բ)Կ Կավբյուրոյի պլենումի որոշմամբ:

Մեր պատմաբանների ու քաղաքագետների կողմից ավելի շատ քննարկվել է Կավբյուրոյի իրավասության հարցը: Ընդգծվել է նրա որպես երրորդ կողմի (Ռուսաստանի) կուսակցական մարմնի, անիրավասությունը նման տարածքային հարցեր լուծելու խնդրում: Երբ ադրբեջանական կողմը նույն կարծիքին է, ապա միանգամից կարելի է համաձայնել նրա հետ, քանի որ դա նրան իսկույն զրկում է Արևելյան Անդրկովկասի Լեռնային Ղարաբաղ անվանված հայկական տարածքների հավակնելու որևէ իրավական հիմքից:

Սակայն, ինչպես ցույց են տալիս վերջին հրապարակումները, ադրբեջանական մասնագետները իրենց փաստարկների զինանոցից չեն հանել Կավբյուրոյի որոշումը: Ամենայն հավանականությամբ Կավբյուրոյի իրավասությունը հիմնավորվում է այն փաստարկով, որ այդ տարիներին այլ սահմանադրա-

ադրբեջանական տարածքներ, իսկ նրանց հետ կապված հարցերը իբրև նրա ներքին գործ:

Այդ տարածքները Խորհրդային Ադրբեջանի սահմաններում թողնելը միջպետական պայմանավորվածության արդյունք էր: ԱդրԽՍՀ-ն, թերևս, միակն էր նախկին խորհրդային հանրապետությունների շարքում, որի սահմանները արդյունք էին խորհրդային իրավաքաղաքական իրողությունների, և որի տարածքային ամբողջականությունը խորհրդային իրավաքաղաքական ժառանգության սահմաններից դուրս զրկվում էր միակ հիմքից:

Բայց հենց այդ ժառանգությունից էր, որ 1991 թվականին հրաժարվեց Ադրբեջանական Հանրապետությունը ԽՍՀՄ-ից դուրս գալու և անկախանալու գործընթացում: Ինչպես պետական անկախության վերականգնման հռչակագրում (օգոստոս, 1991 թ.), այնպես էլ Պետական անկախության սահմանադրական ակտում (հոկտեմբեր, 1991 թ.) Ադրբեջանում խորհրդային իշխանության հաստատումը որակվեց իբրև Ադրբեջանի բռնազավթում: ԽՍՀՄ հետ կապված բոլոր իրավաքաղաքական ակտերը Բաքուն իր համար առ ոչինչ հռչակեց:

Ադրբեջանի խորհրդայնացումը իբրև երկրամասի Ռուսաստանին բռնակցում որակելը և խորհրդային իրավաքաղաքական ժառանգությունից հրաժարվելը Բաքվի համար ունի իրավական հետևանքներ, որոնք գուցե դուրս են մնում մեր դիվանագետների ուշադրությունից:

Եվ հիմա, ինչպես Նախիջևանը, այնպես էլ Արցախը խորհրդային իրավաքաղաքական իրողությունների համատեքստում տրվել են Խորհրդային (և միայն Խորհրդային) Ադրբեջանին: Հրաժարվելով այդ ժառանգությունից և ԱդրԽՍՀ իրավահաջորդը լինելու իրավունքից, Բաքուն իրեն զրկեց այն միակ հիմքից, որը ապահովում էր նրա ամբողջականությունը նախկին ԱդրԽՍՀ տարածքներում: Այն պահից, երբ Բաքուն հրաժարվեց խորհրդային իրավաքաղաքական ժառանգությունից, դադարելով լինել ԱդրԽՍՀ իրավահաջորդը, դադարել են նրա իրավունքները նախկին ԱդրԽՍՀ-ի սահմանները մտցված հայկական տարածքների վրա: Վերադարձը դեպի 1918-1920 թթ. ի-

վրա գերակայող որևէ միջազգային օրենքի կամ սկզբունքի կողմից:

1991 թվականից ի վեր Ադրբեջանական Հանրապետության վերահսկողության տակ անցած, նախկին Խորհրդային Ադրբեջանին հանձնված տարածքները ԱդրԽՍՀ-ԱՀ իրավահաջորդության խզման պատճառով միանշանակ հանդիսանում են Ադրբեջանական Հանրապետության կողմից գրավված, օկուպացված տարածքներ:

Եվ դա գործող բազմակողմ միջպետական պայմանագրերի համաձայն:

Դիվանագիտական ու քարոզչական ինչպիսի բարձր արհեստավարժ գործունեություն էր պետք ծավալելու թուրքական ու ադրբեջանական կողմերին, որպեսզի խնդիրը շրջվեր և ստանար այդպես հակառակ բովանդակություն, որպեսզի թե միջազգային շրջանակներում, թե հանրային գիտակցության մեջ (այդ թվում և մեզ մոտ Հայաստանում) գրավող ու օկուպացնող կողմ ներկայացվեր հայկական կողմը:

Արդյունքում այն է, ինչ արտացոլվում է միջազգային քաղաքական ու բանակցային գործընթացներում. հայերը օկուպացրել են օրինաբար Ադրբեջանական Հանրապետությանը պատկանող տարածքներ: Այն դեպքում, երբ ճիշտ հակառակն է:

Ես ընդհանրապես չեմ մերժում ինչ-որ նկատառումներով ինչ-որ փաստարկների մասին ինչ-որ ժամանակ լռություն պահպանելը: Բայց նույնիսկ այդ պարագայում դրանք չի կարելի նետել մոռացության գիրկը: Այլապես կստացվի, որ մենք ինքներս ենք նպաստում մեր ընդդիմախոսների կողմից մեզ փաթաթվող, մեզ համար աննպաստ պատկերացումների տարածմանը և ամրապնդմանը:

Բայց և մեր լռությունը, և մեր ընդդիմախոսների կողմից մեզ պարտադրված լեզվով խոսելը հասկանալի կլինեին, երբ այն փաստարկները, որոնց մասին խոսվեց վերը, հրապարակի վրա չլինեին: Բայց դրանք կան, և փաստ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԱՍՅԱՆ
Պրոֆեսոր
Պատանդների պաշտպանության
ֆոնդի խորհրդի անդամ,
«Իրավունքն ընդդեմ բռնության»
ծրագրի ղեկավար

ԱՀԳ

Միջազգային

ՖՐԱՆՍԻԱ

Շառլ Էռնյուն խորհրդային լրտես է եղել

Ինչպես արդեն հաղորդել ենք, ֆրանսիական «Էխո դը» շաբաթաթերթը հոկտեմբերի 30-ի համարում սենսացիոն նյութեր է հրապարակել այն մասին, որ Ֆրանսիայի 1981-1985 թթ. պաշտպանության նախարար Շառլ Էռնյուն աշխատել է առեւանգվողական հատուկ ծառայությունների օգտին: Այդ մասին ներկայացնում ենք հավելյալ մանրամասնություններ:

Պարզվում է, որ դեռ 50-60-ական թթ. իր բոլոր հետախույզներն կաղ են հաստատել Շառլ Էռնյուի հետ, առաջարկելով մի վտրիվ գումար (ներկայիս 2.5 հազար ֆրանկի համարժեքը) Ֆրանսիայի իշխանության սեփական վերլուծության դիմաց: Մերձեցման առաջին հայլը կատարեց բոլոր «դիվանագետ»-Ռայկո Նիկոլովը, որը հայտնի էր նաեւ Վիեննայով ազգանունով: Էռնյուն այն ժամանակ 29 տարեկան էր, այն տարիների հակառակորդական շարժումների ակտիվիստ էր եւ նույնիսկ ԽՍՀՄ էր այցելել փոքր ձեռք բերելու համար Բոլղարիայի գույնի ծառայությունների զեկուցագրերում Էռնյուի անունն առաջին անգամ հայտնվեց 1953 թ. մարտի 13-ի զեկուցագրում, ետում է «Էխոդրեսը»:

Ժամանակ առ ժամանակ նա բոլղարներին տեղեկություններ էր հաղորդում եւ հետզհետե ավելի մեծ գումարներ ստանում: 1956 թ. բոլղար ընկերներ Էռնյուին հանձնեցին իրենց մոսկվացի գործընկերներին էին ի դեմս Վլադիմիր Երոֆեեվի. Եր Ֆրանսիայում խորհրդային հայտնի լրտես էր: Շառլ Էռնյուն ստացավ «Անդրե» օպերատիվ ծածկանունը: Իսկ երբ 1958 թ. Հանրապետական ճակատի կողմից առաջադրվեց խորհրդարանի պատգամավոր, նրա բնորոշիչ ֆինանսավորվում էր արեւելյան հոլանդական հետաքրքրություններ:

Շառլի դրամը մեսաղես չէր բավականացնում, չնայած որ բարձր պաշտոններ էր զբաղեցնում եւ լավ աշխատավարձ ուներ: Նա հյուրասիրում էր ընկերներին, ապրում շռայլ կյանքով եւ սիրային արկածներ որոնում: Այդ կերդ առած, դժվար էր ապրել լավ իրազեկիչ գտնել: Սակայն 60-ական թթ. սկզբներին նրա վրա մոնտաժած կատարվեց: Դրանից հետո Շառլի տանը մշտապես պահպանվում էր, եւ նրա հետ հանդիպելը դժվարացել էր: Այդ ժամանակ ՊԱԿ-ը նրան հանձնեց Ռումինիայի հատուկ ծառայություններին: «Անդրեն» դարձավ «Դինու»:

Երբ իշխանության գլուխ անցավ Միտերանը, Էռնյուն նշանակվեց պաշտպանության նախարար: Այդ կերդ առած, դժվար էր ապրել լավ իրազեկիչ գտնել: Սակայն 60-ական թթ. սկզբներին նրա վրա մոնտաժած կատարվեց: Դրանից հետո Շառլի տանը մշտապես պահպանվում էր, եւ նրա հետ հանդիպելը դժվարացել էր: Այդ ժամանակ ՊԱԿ-ը նրան հանձնեց Ռումինիայի հատուկ ծառայություններին: «Անդրեն» դարձավ «Դինու»:

Երբ իշխանության գլուխ անցավ Միտերանը, Էռնյուն նշանակվեց պաշտպանության նախարար: Ժամանակին ԿՀՎ-ի տնօրեն Ջեյմս Էնգլտոնը ֆրանսիացիներին հանձնել էր Ֆրանսիայում աշխատած խորհրդային 60 գործակալների ցանկը, որ կազմվել էր վախտակ Ավստրի Դոլիցինի տվյալների հիման վրա: Հայտնի չէ, թե ցանկում նշվա՞ծ է եղել արդյոք Էռնյուի անունը: Համենայնդեպս, Միտերանը «Անդրեի» գոյության մասին իմացավ միայն 1992 թ. երբ մահացավ Էռնյուն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Եվրամիությունն ուզում է դառնալ մերձավորարեւելյան բանակցությունների համանախագահ

Եվրամիությունը չափազանց շատ դրամ է ներդնում Մերձավոր Արեւելքում եւ ուզում է ակտիվորեն մասնակցել տարածաշրջանի խաղաղությանը: Այսպես կարելի է ամփոփել Եվրամիության արտգործնախարարների Լյուքսեմբուրգյան հանդիպման արդյունները: Հանդիպումը նշանավորվեց արտակարգ իրադարձությամբ: Մերձավոր Արեւելքում Եվրամիության հատուկ ներկայացուցչի նշանակմամբ: Ներկայացուցիչ նշանակվեց Իսրայելում Իսպանիայի դեսպան Միգել Սորաինոսը: Լյուքսեմբուրգում Եվրամիությունն առաջին անգամ ձեւակերպեց տարածաշրջանում իր նպատակները, որոնցից գլխավորը հաշտության բանակցությունների համանախագահի դառնալն է:

ՍՄՆ-ում եւ Իսրայելում եվրոպացիների մտադրությունը հարուցում է վատ հողարկված դժգոհություն: Պատճառներից գլխավորն այն է, որ Եվրամիության մերձավորարեւելյան հաղաքականության ձեւավորման վրա լուրջ ազդեցություն է գործելու Ֆրանսիան: Այդ երկրի նախագահի ժակ Շիրակի վերջերս տարածաշրջան կատարած այցը ցույց տվեց, որ Փարիզը հակված չէ անվերապահորեն պաշտպանելու Իսրայելին, հանդես է գալիս հակահրեական պաշժամիջոցների մեղմացման օգտին եւ հիանալի հարաբերություններ ունի Սիրիայի հետ: Նման մոտեցումը ձեռնտու չէ ոչ իսրայելցիներին, ոչ էլ ամերիկացիներին: Բանը հասավ այնտեղ, որ ԱՄՆ պետքարտուղար Ուորեն Քրիստոֆերը Եվրամիությանը կոչ արեց չշտապել Մերձավոր Արեւելքում հատուկ ներկայացուցիչ նշանակելիս:

Սակայն եվրոպացիներն ունեն իրենց պատճառները: Ներդրումների գումարով Եվրամիության երկրներն առաջատար են տարածաշրջանում: Ինչ վերաբերում է ֆինանսական ու տեխնիկական օգնության տարբեր ծեւերին, այստեղ եւս Եվրոպան առաջին շարքերում է: Եվրամիությունը խոստացել է մինչեւ 1998 թ. վերջը պաղեստինյան ինքնավարությանը փոխանցել 500 մլն էկյու (մոտ 630 մլն դոլար): Եվրոպական մի շարք մայրաքաղաքներում ուզում են տնտեսական առաջատար դերից վերածել քաղաքական ազդեցության:

Ռուսաստանի ԱԳՆ-ի համար Եվրամիության վերջին քայլն այնքան էլ հաճելի նորություն չէ: Բյուսելը հավակնում է դառնալ առաքելության գլխավոր բաղկացուցիչը, թեեւ մինչեւ վերջերս նույն նպատակն ուներ նաեւ Մոսկվան: Հասկանալի է, որ Լյուքսեմբուրգում արտգործնախարարները խոսել են «ԱՄՆ-ի հետ մեկտեղ» հաշտության բանակցությունների համանախագահի դառնալու Եվրամիության ձգտման մասին: Այսուհանդերձ, Ռուսաստանի անունը նույնիսկ չի հիշատակվել: Դա արտացոլում է տարածաշրջանի ճշմարիտ իրավիճակը, որտեղ, ինչպես ընդունված է ասել, բարեկամներ անհնար է գտնել, բայց կարելի է վարձել: Այսօր Ռուսաստանը վարձակալման համար փող չունի:

«ԻԶՎԵՍՏԻԱ»

ՏԱՄԱՌՈՏ

Աբխազիան նախապատրաստվում է ընտրություններին

ՍԽՈՒՄԻ, 1 ՆՈՅԵՄԲԵՐ, ՓԱՍՏ-ԸՓ. Նոյեմբերի 23-ին Աբխազիայում խորհրդարանական ընտրությունների անցկացման համար ծրագրավորվում է ստեղծել 35 ընտրական օկրուգներ, ետում է Վրաստանի հեռուստատեսությունը: Ինչպես ետում են աբխազական խորհրդարանի առաջնորդները, արդեն կազմված են 219 հազար ընտրողների ցուցակները: Սակայն, փորձագետների կարծիքով, այդ թիվը չի համապատասխանում իրականությանը, հաշվի Աբխազիայի բնակչությունը այսօր կազմում է ոչ ավել, քան 140 հազար մարդ:

«Պատրիոտի» համաձայնագիրը չեղյալ

31 ՀՈԿՏԵՄԲԵՐ, WSJ. Ամերիկան եւ Ռուսաստանը չեղյալ են համարել պայմանավորվածությունը մի հնամաձայնագրի կնքման, որով նախատեսվում էր բոլշարեի փորձարկումները «Պատրիոտի» կամ նրա հաջորդ տեսակի պաշտպանական հրթիռների, որոնք այժմ պատրաստման ընթացքում են, 1972 թվականին ձեռք բերված պայմանագրի համաձայն: Պայմանավորվածությունը չեղյալ է համարվել գործադրման ժամկետի ընթացքում երկու կողմերի տարածայնությունների պատճառով:

«ՕՐՎԵՔ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ»

Աշխարհում 250 հազար փոքրահասակ զինվորներ են մասնակցում զինված բախումներին

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 1 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-USIS. Երկրագնդի 33 զինված բախումների «թեժ կետերում» կռվում են կամ դրանց այս տարի մասնակցել են մինչեւ 18 տարեկան 250 հազար զինվոր ու զոհային: Այս տվյալները բերված են «Փոքրիկ երեխաներին» միջազգային կազմակերպության հիմնադիրի այսօրեն տարածված զեկուցագրում:

«Դեռ մի սերունդ առաջ մարտական գործը ծանր էր ու խոշոր, ասվում է փաստաթղթում: Սակայն թեթեւ թնդանոթից գնդի ատեղծումը, որի առավել բնորոշ օրինակը խորհրդային ԱԿ-47-ն է, կերոպավոխեց մարտական գործողություններին մասնակցելու երեխաների հնարավորությունները»:

Փոքրահասակ զինվորներն առավել մեծաթիվ են Աֆրիկայում, այդ դիսիր բավականին հաճախ են հանդիպում Ասիայում եւ Լատինական Ամերիկայում: Ամենավտրիկ մարտիկը, որին ի հայտ էր բերել կազմակերպությունը, կամբոջական «կարմիր հմերների» ջոկատի հինգ տարեկան ավտոմատավոր էր: Զեկուցագրը տեղեկություններ է բովանդակում Սոմալիում եւ Ֆորֆիայի հարց առաջադրների շարքում հաճախ են դեռահաս աղջկաների. Շրի Լանկայում եւ Լիբանանում հաստատվել են փոքրահասակ ինքնասպան ռմբահարների օգտագործման դեպքեր արձանագրել է միջազգային կազմակերպությունը:

«Մենք չգիտեմ է այդ փակեցնի այն փաստի վրա, որ երեխա զինվորներն ու զոհ են, եւ հանցագործ, զեկուցագրի նախաբանում նշել է հետազոտության ղեկավար մրցանակի դափնեկիր հարավաֆրիկացի արհիպիսկոպոս Դեսմոնդ Տուտու: Եր բիմն նրանք ամենաարարատասան զարհուրելի են կատարում: Բայց ինչում էլ որ մեղավոր լինի ներելի, գլխավոր պատասխանատվությունն ընկած է մեծահասակների վրա»:

«Փոքրիկ երեխաներին» կարգախոսը միջազգային հանուրդում է ծանրել ՄԱԿ-ի անդամ ոչ տերությունների կողմից ներկայացվող զինակոչային տարիքը 15-ից մինչեւ 17 տարեկան բարձրացնելու մասին դաբեզպի պատրաստ համան:

ԱԶԳ

Մշակույթ

«Ես Հայաստանից չեմ գնացել, չեզ հետ եմ, սիրում եմ չեզ»

Թատերական ինստիտուտի դահլիճում երեկ լրագրողներին, ուսանողներին ու դասախոսներին յուրատեսակ հանդիպում-ասուլիսի էր հրավիրել Արթուր Մեսչյանը. նպատակը մենք էր լրացնել այն «ձեղերը», որ Արթուրի կարծիքով, մնացել էին ժամուկը ողողած հարցազրույցներում. հարցերին պատասխանելով նաեւ պատասխաններ ստանալ, ինչ-որ տեղ հանրագումարի բերել երեւանյան հյուրախաղերը. հաղորդվել.–

եմ, որ ինձ հետ էին իմ շատ սիրած երաժշտներ Վահան Արծրունին եւ Գուրգեն Մելիքյանը, երիտասարդ դիրիժոր Դավիթ Հարությունյանը, որի հետ, կարծում եմ, կշարունակենք համագործակցել:

Ի՞նչ տվեցին այս համերգները: Առաջին հերթին հասկացա, որ ամեն շաբաթ պիտի գրաղվեմ երաժշտությամբ ինձ ամենից հիշ երգող երաժիշտն եմ 7 տարվա մեջ Միացյալ Նահանգներում ընդամենը 7 համերգ: Ինձ ոգեշնչող չեմ համարում, չեմ ընտիպացել բենյին, վրիպումներ եմ թույլ տալիս, որ աշխատելու եմ ուրդել: Շնորհակալ եմ բերթերի բոլոր հոդվածներին համար, բայց... տեսեք, ես բարդ չեմ (ինքնաոով երիտասարդ, որ երգում է բենյից), ես երաժիշտ եմ: Ի՞նչ էր «Հաղորդությունը»: Յավոք, շատերը կարծեցին, թե դա էրեսոնենական արժեքների ծնկնաբանությունն է: «Հաղորդությունը» իմ չափազանց անձնական վերաբերմունքն է էրեսոնենության նկատմամբ: Ես փորձեցի նույնիսկ վերլուծել «Հայր մեր», որ շատերին կարող է արարողություն թվալ... Էրեսոնենությունը բողոքի գնրե չէ, որ նիշում ենք այն ժամանակ, երբ ծանր վիճակի մեջ ենք: Ինձ համար այն երկու արժեք ունի խղճի եւ սխո գաղափարը, որ մոռացվել են: Դրանք մաղվեցին ու փչացան եկեղեցական ինստիտուտների դաժան ակնների տակ, որ մեծագույն կարեսս է մեզ համար: Տղամարդ, ազգնիկ էրեսոնյայի գաղափարն է դրված «Հաղորդության» վերջում: Չէի կարող չգրել այն, որովհետեւ տեսնում եմ, թե ինչ է կատարվում մեր շարքը. վերջին երկու տարում Նյու Յորքում վեց էրեսոնենական եկեղեցի է կառուցվել միասեռականների համար... Հոգնել եմ էրեսոնենությունը. Քրիստոսին բոլոր բան ինաստով ծաղրող ֆիլմերից ու հաղորդումներից: Ես, որպես մի ժողովրդի զավակ, որ առաջինն է ընդունել էրեսոնենությունը, սեղծել այն հրաշալի երեսյթը, որ կոչվում է էրեսոնենական տաճար, այն հրաբեր, այն ծեսը, որ կոչվում է պատարագ, փորձելու եմ ընդդիմանալ էրեսոնենության ճգնաժամին: Ես հոգեւորական չեմ, հարոզիչ չեմ, նույնիսկ զգվում եմ «խելոված» էրեսոնյաներից, նրանցից, ովքեր-վերջին տարիներին ծռնատ են մեր ազգային արժեքները: «Հաղորդությունը» ավելի շատ ազգային հարեսկանության հիմքերին մոտենալու մի փորձ է: Ես կախաբյանը չի գալիս հրաժարով, այլ ստեղծվում է երկար տարիների ընթացքում. կառուցվում օրեցօր, ժամ առ ժամ: Անկախության մեջ գտնել իմներս մեզ սա է անկախությունը, որ սահմանային, նույնիսկ պետական հասկացողություն չէ: Դարեր շարունակ պետականություն չենք ունեցել, բայց ունեցել ենք մեր ճարտարապետությունը, մեր շարականները: Հիմա անկախ ենք: Ուրեմն, բար չշղտենք իրար վրա, չմեղադրենք իրար: Ունանց թվում էր երեսի, թե գալու եմ ու խառնվեմ հարաբական պրոցեսներին: Ո՛չ, չեմ խառնվելու, որովհետեւ ես ուրիշ աստծու եմ ծառայում... Ոչինչ հենց այնպես չի լինում: Պատճառն ունի նախապատճառ, նախապատճառը հիմք: Ես հենց այդ հիմքին եմ ծառայում, ինչպես կարող եմ:

Գնացինք շրջաններ, համերգներ տվինք գինվորների համար: Երբեք այդպես լավ չէի զգացել ինձ: Դահլիճում զարմանալի բան կատարվեց. Մարդիկ եկել էին դահլիճ... մոմերով: «Հաղորդության» ժամանակ մոմերը վառեցին, ոտի կանգնեցին. երեկոն ծեսի վերածվեց: Ուրեմն, ինչ-որ բան ծուռ էր, ուրեմն, մարդիկ այդ ինչ որ բանի դրական էին փորձում լրացնել իմ երգով: Ես վախեցա դրանից. իմ խնդիրը հարցազրույցը չէր: Մտածելու բան է ինչի՞ դրական ունենք այսօր, եւ ի՞նչն է չափից ավելի շատ:

Ես կատարում եմ անհրամաբանությունից. հազարավոր մարդիկ, որ ասծո կողմից օրհնված էրեսիկ բաներ տաղանդ ունեն, դարաս են: Այդպես չպիտի է լինի, սխալ է: Բայց, տեսեք, դրա համար պետք չէ դարիսաններ ջարդել, դրանից բան դուրս չի գա», յուրատեսակ այս «հաղորդությունից» հետո Մեսչյանը բնորոշ մեսչյանական անկեղծությամբ պատասխանեց բազմաթիվ (ոչ անձնական) հարցերի:

Մեր հարցին, թե որ տարեր Հայաստանում, ընդդիմության հետ կլինե՞ր, Արթուր Մեսչյանը պատասխանեց. «Երբ ընդդիմությունը ներկայացներ մի ծրագիր, որ 100 տոկոսով ընդունելի լիներ ինձ համար (ի՞նչ եմ կատարում, ո՞ր եմ գնում, ինչպե՞ս), կլինեի դրա կողմնակիցը. Այսօր այդպիսի ծրագիր չեմ տեսնում»:

Հետաքրքիր պատմվեց նաեւ, որ «Հաղորդությունը» վիճչի՛ անվանվեն (բացատրությամբ «Հայր մերի», որ անընդունելի է), ոչ մեծ փոփոխություններով: Օվկիանոսի այս մասից ժամանած երաժիշտները հասկացան, որ հայ հանդիսատեսի հետ «խաղեր խաղալ չի կարելի»: Կատարպաղծություն չի տղում, բայց կատում է հայրենիքը. Աղանդներին (հայ բուդդիստներին, օրինակ) չի հավատում, բայց եւ հարգում է մարդու ազատությունը. դասավոր չէ, բայց եւ բույլ չի տա, որ իրեն որեւէս ամբասկանչական մոտենան: Երբ ՀՀ նախագահին հարց տղեր, կներկայացներ մի ցուցակ մեր կյանքի բոլոր «անախտնիկ երեսույթների» մասին (օրինակ ի՞նչ է սեփականաշնորհումը, ո՞վ եւ ինչպե՞ս է տնօրինելու սեփականաշնորհված գործարանները): Իրեն ճանաչված չի համարում ոչ միայն ԱՄՆ-ում, այլեւ Հայաստանում (կարծում են, որ ինքնաբավ է):

Հայաստանի Թեհրանյան մշակութային միության մրցանակաբաշխություն

Թեհրանի ժակութային միությունը հայտարարում է գրականության, կերպարվեսի, երաժշտության, կինոյի եւ թատրոնի բնագավառների 1996 թվականին հրատարակված, սեղծված մեկական լավագույն սեղծագործության մրցանակաբաշխություն:

Մրցանակակիր սեղծագործությունների համար սահմանվել է պարգեւ՝ 500-ական ԱՄՆ դոլար:

Մրցանակային հանձնաժողովը աշխատանքները կընդունի հայտարարության հրապարակման օրից՝ երկու ամսվա ընթացում:

Հայտերը ներկայացնել Թեհրանի ժակութային միության գրասենյակ:

Հասցեն՝ Կորյունի 19 ա, 3-րդ հարկ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՀՐԱՆԻ ԺԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԹԱՏԵՐԱՅԱՆ ՄՐՈՒԹՅՈՒՆ

ՀՄՄՄ Կենտրոնական վարչության նիստում

1996 թ. հոկտեմբերի 31-ին տեղի ունեցավ Հայաստանի Թեհրանի ժակութային միության նորընտիր Կենտրոնական վարչության անդրանիկ նիստը: Օրակարգում հետեյալ հարցերն էին.

1. Դիվանի ընտրություն
2. Հայաստանի Թեհրանի ժակութային միության նախագահ Ֆ. Դովլաթյանի հաղորդումը միության Ֆինանսական իրավիճակի եւ գործունեության մասին:

Կանոնադրական կարգի համաձայն հաստատվեց դիվանը:

Իր ելույթում Ֆ. Դովլաթյանն անդրադարձավ ժակույթի որեւէ բնագավառում (գիտություն, կերպարվեստ, երաժշտություն, կինո եւ թատրոն) Թեհրանի ժակութային միության մրցանակաբաշխություն անցկացնելու հարցին: Այդ կապակցությամբ հաստատվեց համապատասխան հանձնախմբերի կազմը:

Որոշվեց նաեւ Թեհրանի անվան կրթաբոլոկ հատկացնել Հայաստանի սեղծագործական բաժնում աշխատող տարվա լավագույն ուսանողին:

Սահմանվեց Ռիտա Պալյանի անվան մրցանակ երեսանի Թեհրանի անվան կրթահամալիրի, Կարբիի եւ Գյումրիի Թեհրանի անվան դպրոցներում անցկացվող մրցույթների հաղթողին:

Վարչությունը անդրադարձավ ՀԹՄ միության 5-րդ համագումարում Ֆ. Դովլաթյանի առաջարկությանը՝ թեհրանական համաժողով կազմակերպելու, ինչպես նաեւ Ամերիկայի եւ Կանադայի ՀՄՄ Կենտրոնական վարչության աստենատես Վարդգես Պալյանի առաջարկությանը՝ Թեհրան ՄՄ-ի 50-ամյակի առիթով կազմակերպելու ժակութային ոխտագնացություն դեպի հայրենիք:

Վարչությունում լսվեց նաեւ Վ. Հարությունյանի, Ա. Օհանյանի, Կ. Հայրապեյանի եւ Ա. Գալսեյանի առաջարկությունները:

Խաչատուր Աբովյանին նվիրված միջոցառումներ Գյումրիում

Ավետիք Խաչակյանի ծննդավայր Գյումրիում հոկտեմբերի 30-ին, թեեւ ոչ մեծ միջոցառումներով, հիշվեց բանաստեղծի ծննդյան 121-րդ տարելիցը: Թատերական հրապարակի հարեւանությամբ Խաչակյանի արձանի մոտ հանդես եկան նրա անունը կրող դպրոցի աշակերտները, որոնք արտասանեցին մեծ հայրենակցի բանաստեղծություններից եւ քարե ծաղիկներ դրեցին արձանի պատվանդանին: Գրական-երաժշտական գողտրիկ ցերեկույթ անցկացվեց Արմեն Տիգրանյան երաժշտական դպրոցի դահլիճում: Հնչեցին բանաստեղծի լավագույն սեղծագործությունները, երգեր նրա խոսերով՝ աշնանային ցուրտ օրվա մեջ ոգեղեն ջերմության պահեր պարգեւելով հավաքվածներին: Ցերեկույթի կազմակերպիչը Գուրգեն Բորյանի անվան գրադպրոցի աշխատողներն էին: Նույն օրը գեղոյման հանդիսություն կար նաեւ Խաչակյան գյուղում:

Կազմակերպված միջոցառումները հիշեցրին, որ բերես ժամանակն է վերականգնել Գյումրիում դողգիայի Խաչակյանական մոռացված տոնահանդեսները, բերես նաեւ Շիրազյան օրեր անցկացնել...

ԳԵՂԱՄ ԴԱՐՏՅԱՆ

Վախճանվեց կինոբեմադրիչ Մարսել Կառնեն

Փարիզի արվարձան Կլամար քաղաքի հիվանդանոցում հոկտեմբերի 31-ին վախճանվեց համաշխարհային կինոարվեստի հիմնադիրներից մեկը՝ Ֆրանսիացի կինոբեմադրիչ Մարսել Կառնեն: Նա ծնվել էր 1909 թ. օգոստոսի 18-ին Փարիզում: 1928 թ. ֆիլմերի աշխատում էր կինոյում: Առաջին ինքնուրույն լիամետրաժ կինոնկարը «Ժննի» հոգեբանական դրաման էր (1936):

Մարսել Կառնեն ֆրանսիական կինոարվեստում «բանաստեղծական ռեալիզմի» առաջատար վարպետներից է: Երկար տարիներ համագործակցել է նշանավոր բանաստեղծ Ժակ Պրեվերի հետ: Առավել հայտնի են Կառնեի «Մոտեցների առաջին գիշերը» (1938), «Օրն սկսում է» (1939), «Երեկոյան այցելուներ» (1942), «Փորիկ դրախտի զավակները» (1945), «Փարիզի օդը» (1954), «Ծերեզ Ռահեն» (1958), «Մարդասպան ներ հասնում օրենքի» (1971) ֆիլմերը: RFI ռադիոկայանի հաղորդման հեղինակն Արմեն Կառնեի մահվան կապակցությամբ հանգրծ նյութ է ունենալով, Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը մեծ կինոգործչին ընդհանրապես հայտնեց ցավակցություն «այդ հրաշալի տղա» համար:

Դերասան Կառնեի «Մոտեցների առաջին գիշեր» կինոնկարից

ԱԶԳ

Մարզական

ԳԱՎԱԹԱԿԻՐՆԵՐԻ ԳԱՎԱԹ

Նորվեգական հանելուկ «Էյնդհովենին»

ՀՐԱՅՐ ՆԱԶԱՐՅԱՆ

Գավաթակիրների գավաթի խաղարկության 1/8 եզրափակչի պատասխան հանդիպումներով ավարտվեց եվրոպական ֆուտբոլային եռօրյա փառատոնը։

Ռուսաստանը զրկվեց եվրոգավաթների համար պայքարի իր վերջին թիմից։ Մոսկվայի «Լոկոմոտիվը» Լիսաբոնում զիջելով 0-1 հաշվով տանը բավականին արագ վերականգնեց հավասարակշռությունը։ 12-րդ րոպեին Անդրեյ Սոլոմատինը գեղեցիկ օգտվեց պորտուգալացի պաշտպանների անփութությունից և ազատվելով հետապնդողներից, սառնասրտորեն գնդակն ուղարկեց մրցակցի դարպասը։ Սակայն, առաջին խաղակեսի միջնամասում, երբ երկրորդ նախազգուշացումից հետո դաշտից հեռացվեց Սերգեյ Բուրենկոն, երկաթուղայինների խաղը «կոտրվեց»։ «Բենֆիկայի» փորձառու ֆուտբոլիստներն անմիջապես զգացին մոսկվացիների տոկունության թուլացումը և աստիճանաբար տիրեցին տարածքին, սուր պահեր ստեղծելով տանտերերի դարպասի մոտ։ Ընդմիջումից անմիջապես հետո գանիացի մրցավար Կենու Էրիկ Ֆիշերն անհասկանալի դատավորությամբ չհաշվեց «Բենֆիկայի» դարպասի երկրորդ գրավումը։ Իսկ մեկ րոպե անց նորից սուր կազմակերպված անակնկալ բերեց վերջ մոսկվացիների Պանդուռոն հավասարեցնում է հաշիվը 1-1։ Սակայն, 59-րդ րոպեին երկարատևային Օլեգ Գարինի խփած երկրորդ գոլը նոր հույս ներշնչեց մոսկվացիների երկրպագուներին։ Ցավոք, այն տևեց 6 րոպե։ 64-րդ րոպեին Կանդիդոն օգտվելով տանտերերի պաշտպանությունում առաջացած ճեղքից, կենտրոնից արագորեն ներխուժեց տուգանային հրապարակ և նորից հավասարեցրեց հաշիվը։ Իսկ հանդիպման վերջին րոպեին պորտուգալացիների հարձակվողին ռմբարկու Պինտոն դիպուկ հարվածով դրեց այս դրամատիկ հանդիպման վերջակետը։ «Լոկոմոտիվի» հետ պայքարում երկրորդ հաղթանակը դարձնելով իր թիմին։

Փարիզում տանտերերը վստահորեն հաղթեցին թուրքական «Գալաթասարային»։ Առաջին խաղում կրած պարտությունից հետո (2-4), «Պարի Սեն Ժերմենը» լիովին վայելեց ռեւանշի հաճույքը, 4 անպատասխան գնդակ ուղարկելով թուրքերի դարպասը։ Հարավսլավիայի մայրաքաղաքում «Բարսելոնը» առանց առանձնակի ջանքերի «սանձահարեց» կանանց «Ցրվենա զվեզդային»։ Երկրորդ խաղակեսի սկզբում Զոլան Եվգինիխը բացեց հանդիպման հաշիվը։ Սակայն, արդեն մեկ րոպե անց, բրազիլացի Ջովանինին զրկեց հարավսլավացի ֆուտբոլիստներին երկու է նվաճել նաև եվրոպական գավաթակիրների գավաթը։

Սակայն, հինգշաբթի օրը, թիմի պատվին զգալի հարված հասցվեց։ Նորվեգական «Բրանի» ֆուտբոլիստները Հոլանդիայում 2-2 հաշվով ավարտեցին հանդիպումը և իր խաղերի արդյունքով հաղթեցին 4-3։ Մեկ այլ սկանդինավյան ակումբ՝ շվեդական ԱԻԿ-ը իր խաղը լավել էր դեռևս երկու շաբաթ առաջ, հյուրընկալվելիս հաղթելով ֆրանսիական «Նիմ»-ին (3-1) և Ստոկհոլմում իրեն թույլ տվեց պարտվել 0-1 հաշվով։ Ընդ որում, ...

«Բարսելոնա»–«Ցրվենա Զվեզդա» խաղից

խաղի արդյունքով հաղթողության հասնելու հույսից։ Ոչ ոքին առավել ձեռնտու էր խորհրդակցիններին։

Իսկ Պորտուգալիայում իսպանական «Ֆիորենտինան» հայրում էր «անցնցի եղբայր»։ Լավագույն Լուսիտանո պարտավ գոլի հեղինակ 1-0 հաշվի մի պայքարը շարունակելու ողջալը կրեեր չեխերին։ Սակայն, այդ երեկո բախտը երես թեքեց «Սպարտայից», երբ Անետա Մարգարիտան իր խաղով խառնաշփոթություն, «աստծո ոտքով» վերևից «Ֆիորենտինային» խաղատարածությունից հավասարեցրեն։

Նոր մրցաշրջանի մեկնարկից առաջ հոլանդական «Էյնդհովենի» ղեկավարությունը հայտարարել էր, որ ազգային առաջնությունում հաղթելը բավարար չէ, անհրաժեշտ է նվաճել նաև եվրոպական գավաթակիրների գավաթը։ Մրցամրցի մյուս փուլերում հոլանդական ԱԵԿ-ի և անգլիական «Լիվերպուլի» անցնելով թիմերը, կարծես «խաղի ձեւով» հյուրընկալվելության օրենքները, սեփական դաշտում պարտության մատնեցին շվեյցարական «Սյոնին» (6-3)։ Ընդ որում, այդ խաղում զարմանալի դեպք տեղի ունեցավ։ «Լիվերպուլի» դարպասապահը ներս մտած գնդակը արագ վերցնելով, մրցակցի հարված ենթադրված դարպասը թողնելով և մնացին խաղադաշտից։ Նա կարծես մարտահրավեր նետեց սեփական պաշտպաններին, որոնցից մեկն էլ խաղային անհաջող կասկածանքին, «գոլագան» գնդակ ընկավ դարպասի դարպասապահին։

Փարիզում տանտերերը վստահորեն

ՇԱԽՄԱՏ

Վլադիմիր Հակոբյանը վիճարկում է երրորդ մրցանակը

Փոքրիկ շախմատային ողբերգության ականատես եղավ հանդիսատեսը Ֆրանսիայի Կապ դ'Ագդ քաղաքում անցկացվող Եվրոպայի արագ շախմատի առաջնության կիսաեզրափակչում։ Հայաստանի չեմպիոն Վլադիմիր Հակոբյանը սեւերով շահած դրություն (ավելի զինվոր եւ մեծ դիրքային առավելություն) ստանալով հոլանդացի Լուկ վան Վելիի դեմ... մոռացավ, որ հերթական քայլի համար իրեն մնում է 50 վայրկյան, սկսեց խորհել եւ սպառեց ժամանակը։ Դա վճռորոշ եղավ. վան Վելին մտավ եզրափակիչ, որտեղ այսօր մրցամարտի չեմպիոնի կոչումը կվիճարկի Անատոլի Կարպովի հետ։

Հակոբյանը այժմ Զբինեկ Հրաչեկի (Չեխիա) հետ կվիճարկի երրորդ մրցանակը։ Այս մենամարտի հաղթողին սպասում է 45000, իսկ պարտվողին՝ 35000 ֆրանկ մրցանակ։ Գ. Հ.

Գաբրիել Սարգսյանը՝ միանձնյա առաջատար

Իսպանիայի Մենորկա կղզում անցկացվող աշխարհի պատանեկան առաջնությունում երեւանցի Գաբրիել Սարգսյանը, որը հանդես է գալիս մինչեւ 14 տարեկանների մրցաշարում, վերջին տուրից առաջ միանձնյա գլխավորում է աղյուսակը։

Նախավերջին տուրում Գաբրիելը սեւերով կարեւորագույն հաղթանակ տարավ իր հետ համահավասար ընթացող վրացի Գավրիհնդաշվիլու նկատմամբ եւ 10 հնարավորից վաստակեց 8 միավոր։ Մեր մյուս պատվիրակը՝ Լեւոն Արոնյանը եւս վստահորեն պարտության մատնեց ուկրաինացի Կուրիլկինին եւ 7,5 միավորով 2-5-րդ տեղերն է բաժանում ֆրանսիացի Բաքրոյի, իսպանացի Վալեխոյի եւ ուզբեկստանցի Խամրակուլովի հետ։ Այսպիսով, աշխարհի չեմպիոնի կոչումը նվաճելու հնարավորություններ պահպանում են հինգ մասնակիցներ, որոնցից երկուսը Հայաստանի ներկայացուցիչներ են։

Վերջին տուրում մեր պատանիները խաղում են սպիտակներով. Սարգսյանը՝ Բաքրոյի, իսկ Արոնյանը՝ Խամրակուլովի հետ։ Եթե երկու կամ ավելի մասնակիցներ մրցաշարն ավարտեն հավասար միավորներով, ապա աշխարհի չեմպիոնին կորոշի գործակիցների աղյուսակը։

Մենորկայից հաղորդում են, որ բոլորը անհամբերությամբ սպասում են հատկապես Սարգսյան-Բաքրո պարտիային։ Բաքրոն շախմատային շրջանակներում շատ հայտնի անուն է, աշխարհի պատանիների չեմպիոն, ֆրանսիական շախմատի հույսը։ Հետաքրքիր է, որ ֆրանսիական հեռուստատեսային ընկերությունների մի խումբ հատուկ ժամանել է Մենորկա՝ Բաքրոյի եզրափակիչ հանդիպումը նկարահանելու համար։

Ինչ վերաբերում է Գաբրիելին, ապա նրան շատ քիչ գիտեն անգամ Հայաստանում։ Այնպես որ, ավելորդ չէ նշել, որ նոր է լրացել Սարգսյանի 13 տարին (այն դեպքում, երբ նրա մրցակիցների մեծ մասը 14 տարեկան է), եւ այդ տարբերությունը նման տարիքում շախմատում քիչ բան չէ։ Արժե նաեւ ավելացնել, որ Գաբրիելը միայն վերջին պահին հրավեր ստացավ մասնակցելու համաշխարհային առաջնությանը։

Հայաստանը դեռ չի կորցրել նաեւ 16 տարեկանների խմբում աշխարհի չեմպիոնի կոչումը նվաճելու հնարավորությունը։ Ճիշտ է, այդ խնդրում շատ դժվար կլինի։ Նախավերջին տուրում Կարեն Ասրյանը ոչ-ոքի խաղաց եւ այժմ մի քանի այլ մասնակիցների հետ ունենալով 7-ական միավոր, բաժանում է երրորդ տեղը եւ կես միավորով ետ է մնում հունգարացի Ատեսից եւ անգլիացի Մախից։ Այսպիսով, անհրաժեշտ է, որ երկու առաջատարները, որոնք հանդիպում են միմյանց հետ, ոչ-ոքի խաղան, իսկ Ասրյանը հաղթի ամերիկացի Պերելշտեյնին, որպեսզի մրցավարները դիմեն գործակիցների աղյուսակին (այն, նախնական հաշվարկներով, հայ շախմատիստի օգտին է)։

Մեր մյուս շախմատիստներից տասներորդ տուրում հաղթանակներ տարան Դավիթ Պետրոսյանը, Արթուր Չիբուխչյանը, Հերմինե Մխիթարյանը։ Իսկ Լիլիթ Մկրտչյանը, պարտվելով, զրկվեց չեմպիոնուհու կոչման համար պայքարելու հնարավորությունից։

Գ. Հ.

ԵՐԵՎԱՆ

Օլիմպիական հերթափոխի ուսումնարանը 25 տարեկան է

Լրացավ օլիմպիական հերթափոխի հանրապետական ուսումնարանի հիմնադրման 25 տարին։ Դժվարին ճանապարհ է անցել այս յուրօրինակ մարզակրթական օջախը, որը խորհրդային ընթացքում մարզաշխարհին ներկայացել է այնպիսի տաղանդավոր եւ համաշխարհային մեծության աստղերով, ինչպիսիք են օլիմպիական չեմպիոններ Օգանես Միրզոյանը եւ Արմեն Նազարյանը, Ասլանյանի օլիմպիական խաղերի արծաթե մրցանակակիր Արմեն Մկրտչյանը, աշխարհի երիտասարդների չեմպիոն Մեսրոպ Ճաքրյանը, աշխարհի չեմպիոն Արա Գեւորգյանը, հանրահայտ ֆուտբոլիստ Խորեն Հովհաննիսյանը եւ շատ ուրիշներ։ Պատկերը ամբողջացնելու համար նշենք, որ օլիմպիական հերթափոխի ուսումնարանում մեծ սպորտի ճանապարհին իրենց առաջին քայլերն են արել երկու օլիմպիական չեմպիոններ, օլիմպիական խաղերի երկու արծաթե մեդալակիրներ, աշխարհի եւ Եվրոպայի 41 չեմպիոններ, երեք սպորտի վաստակավոր վարպետներ, 35 միջազգային կարգի սպորտի վարպետներ եւ մոտ 450 սպորտի վարպետներ։ Նման հաջողությանը, կարծում ենք, կնախանձեն արտասահմանյան շատ նմանատիպ հաստատություններ։ Ինչ խոսք, այս ամենը կապված է ուսումնարանի տնօրինության եւ մարզիչ-մանկավարժական բարձրորակ կադրերի արհեստավարժ աշխատանքի շնորհիվ։ Ներկայումս ուսումնարանում աշխատում են հանրապետության 34 վաստակավոր մարզիչներ, գիտական աստիճան եւ կոչում ունեցող 12 դասախոսներ։ Ուսումնարանի կայացմանը մեծապես նպաստել են նրա բոլոր աշխատակիցները, որոնց աշխատանքը տարբեր տարիներին կազմակերպել ու համակարգել են տնօրեններ Լեւոն Գալստյանը եւ Էդուարդ Գրիգորյանը։ Ներկայումս այս մարզակրթական օջախը գլխավորում է բանգիտության միջազգային կարգի մրցավար, հանրապետության վաստակավոր մարզիչ Դերենիկ Գաբրիելյանը։ Այս դժվարին օրերին նա կրկնակի պատասխանատվություն է կրում ուսումնարանի պահպանման եւ հետագայում էլ բարձրորակ մարզիկներ պատրաստելու համար։ Հուսով ենք, որ այսօր էլ դա ուսումնարանի մարզա-դաստիարակչական կազմի ուժերից վեր չէ։

Երեկ, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնի դահլիճում էին հավաքվել ուսումնարանի նախկին ու ներկայիս աշխատակիցներն ու սաները։ Հոբելյանական հանդիսավոր երեկոյի ժամանակ նրանց ողջունեցին ՀԱՕԿ-ի նախագահ Ալեքսան Ավետիսյանը, ԿԳ կրթության եւ գիտության փոխնախարար Վովա Մեցոյանը, Երեւանի քաղաքապետարանի սպորտի եւ ֆիզկուլտուրայի գծով գլխավոր մասնագետ Հովհաննես Ավետիսյանը։ Ընթերցվեց ԱՕԿ-ի նախագահ, մարկիզ Խուան Անտոնիո Սամարանչի հասցեին ուղերձը Հայաստանի ԱՕԿ-ին եւ օլիմպիական հերթափոխի ուսումնարանի կոլեկտիվին ու սաներին։ Այդ երեկո ներկաներին ողջունեցին հանրապետության ճանաչված երգիչներ, դերասաններ եւ խմբեր։ Հանդես եկավ ուկրաինական կրկեսի հայտնի դերասան Նիկոլայ Նոցենկոն։ Կարծում ենք, այդ երեկույթի ուրախ տրամադրությունը հետագայում էլ կօգնի ուսումնարանի հետ առնչվողներին։ Հ. Խ.

ՀԱՄԱՌՈՏ

Գաբրիելա Սաբատինին թողնում է սպորտը

«Նյուզդեյ» շաբաթաթերթի (4 նոյեմբեր) հաղորդմամբ, արգենտինացի հայտնի թենիսիստ Գաբրիելա Սաբատինին (26 տարեկան) հոկտեմբերի 24-ին հայտարարել է, թե թողնում է սպորտը 12 տարվա փառավոր ուղուց եւ 27 անհատական հաղթանակներից հետո։ Սաբատինին, որ Օպենի Գրանդի մրցաշարում հաղթել է 1990 թվականին Միացյալ Նահանգների բաց առաջնությունում, վերջին 6 տարիներին չէր կարողացել եզրափակիչ հասնել եւ այդ պատճառով նրա վարկանիշը միջազգային ասպարեզում իջել էր 29-րդ հորիզոնականը։

Քլինթոնը՝ գոլֆի սիրահար, մինչդեռ Հիլարին չի ըմբռնում այդ խաղի իմաստը

Տարածված է այն կարծիքը, թե ԱՄՆ-ի առաջին լեդի Հիլարի Քլինթոնը գոհ նախընտրական արշավի ժամանակաշրջանում պետք է ամեն ինչում համաձայն լինի ամուսնու հետ։ Կարելի է վիճել, բայց միայն մանր հարցերի շուրջ։ Օրինակ, երբ Հիլարիին հարցրին, թե ո՞րն են իր եւ ամուսնու նախասիրությունների տարբերությունները, նա պատասխանեց. «Ես չեմ սիրում այն ֆիլմերը, որոնցում շատ է բռնությունը։ Մինչդեռ Բիլը փառ դրանք համարում է գործողությունների ...»։ ԱՄՆ-ի նախագահի եւ իր սիրած ճաշատեսակները տարբեր են, այլ հարցերում. «Ես սիրում եմ սպորտ, բայց չեմ կարող օրական 10 ժամ մարզական հաղորդումներ դիտել կամ գոլֆ խաղալ, ինչպես դա անում է Բիլը», - լրագրողներին խոստովանեց Հիլարին։ Ինչպես հաղորդում է Ռոյթեր գործակալությունը, նախագահի սիրելի գոլֆ խաղալը հրաժարվել է այն բանից հետո, երբ երկու անգամ ամուսնու հետ վնասվածք է ստացել ... ըմբռնել այդ խաղի իմաստը։

«ԿՈՄՍՈՄՈԼՍԿԱՅԱ ՊՐԱՎԴԱ»

Իսպանիա. Ոստիկանն օգնեց ֆուտբոլային թիմին

Իսպանիայի Սեւիլյա քաղաքի մի ոստիկան յուրահատուկ ձեւով որոշեց օգնել իր նախասիրած ֆուտբոլային թիմին։ Խաղից մի քանի ժամ առաջ նա հայտնաբերեց հակառակորդ թիմի գլխավոր մարզչի մեքենան կանգնեցված անթույլատրելի տեղում։ Ոստիկանը հիշեց իր պարտականությունները, որոնց պատճառով մարզիչը հետեւից ոստիկանական բաժանմունք գնաց։ Գլխավոր մարզիչն ոստիկանական բաժանմունքում անցկացրեց մոտ 4 ժամ։ Վերջին պահին այնուամենայնիվ նա հասցրեց ժամանել խաղահրապարակ, բայց այն վիճակում, որ չկարողացավ ոչնչով օգնել իր ֆուտբոլիստներին։ Ակամայի մեծ կարծիքով, ոստիկանը թիմի երկրպագուներից չէ։

ՇՐՋԱՆ

Ջեյմս Քոլինզ. «Միացյալ Նահանգները ներգրավված կմնա կովկասյան խնդիրներում»

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 1 ՆՈՅԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Նորանկախ պետությունների հարցերով Միացյալ Նահանգների պետքարտուղարի հատուկ խորհրդական, լիազոր դեսպան Ջեյմս Քոլինզը հոկտեմբերի 25-ին մասնակցել է Կովկասի հիմնախնդիրների քննարկման հարցերով Ամերիկայի քաղաքական կազմակերպությունների համագումարի նախաձեռնությամբ հրավիրված խորհրդաժողովին: Ջեյմս Քոլինզը ներկայացրել է կովկասյան երեք հանրապետությունների զարգացման իր տեսակետները, Միացյալ Նահանգների շահերը, ինչպես նաեւ Թուրքիայի ու Ռուսաստանի քաղաքականության շրջանակում:

Ջեյմս Քոլինզը նշել է, որ Միացյալ Նահանգները հանձնառել է օգնել Կովկասի երեք նորանկախ պետություններին. Հայաստանին, Ադրբեջանին եւ Վրաստանին ժողովրդավարության զարգացման եւ ազատ շուկայական հարաբերությունների կառույցների ձեւավորման խնդրում: Սակայն, ինչպես է այն կարծիքը, որ շրջանը չի կարող օգտագործել տնտեսական ողջ ներուժը, քանի դեռ առկա են հակամարտությունները եւ քանի դեռ պետությունները չեն համագործակցում, համոզմունք, որը կարեւորվում ողջ շրջանի օգտին: Նա ասել է, թե տարածքում առկա է «մեկի հաղթանակը մյուսի պարտությունն է» սկզբունքը, մինչդեռ պետք է կենտրոնանալ համագործակցության սկզբունքի շուրջ, որի պայմաններում բոլոր պետությունները կարող են օգտվել Միացյալ Նահանգների օժանդակությունից:

Քոլինզն իր կողմից նշել է, որ Թուրքիան կառուցողական դեր է կատարում ղարաբաղյան հակամարտության կարգավորման եւ շրջանի այլ խնդիրներում: Որպես օժանդակ լուր հայտնենք, որ Քոլինզն իր դիվանագիտական աշխատանքը սկսել է Թուրքիայում, իսկ, ինչպես ինքն է շեշտում, իր ընտանիքը առանձնակի կապվածություն ունի Թուրքիային, մանավանդ, որ որդին այնտեղ է ծնվել:

Անդրադառնալով Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի անկախության հռչակման 5-րդ տարելիցին, Ջեյմս Քոլինզը կարծիք է հայտնել, որ բոլոր երեք հանրապետությունները պետականության հաստատման ուղղությամբ մեծ քայլ են արել եւ սկսել քաղաքական ու տնտեսական բարեփոխումներ, որի արդյունքն էլ առաջիկայում կերեւա:

Պետական այս բարձրաստիճան պաշտոնյան հավաստիացրել է, որ Միացյալ Նահանգները շարունակելու է աջակցել Կովկասի պետություններին, ժողովրդավարության հաստատման, իրավական հիմքերի ձեւավորման, առողջ տնտեսության զարգացման եւ օտարերկրյա ներդրումների խնդիրներում եւ երկկողմանի հարաբերությունների շրջանակներում եւ միջազգային գանազան կազմակերպությունների միջոցով: «Մենք այն կարծիքն ունենք, որ Թուրքիային եւ Ռուսաստանին, որ դեռ կից պետություններն են եւ տարածքի հետ պատմական երկարատեւ կապեր ունեն, հատուկ դեր է վերապահված: Անշուշտ, մերձավորությունից ու դարերի ընթացքում ունեցած դերից կախված, յուրաքանչյուրը պետք է կրկին ծառայի փոխըմբռնման հետ կապերի մասին եւ վերապահումների հին գաղափարներն ու մտայնությունը», ասել է Քոլինզը: Ըստ նրա, ժամանակն է, որպեսզի տարածքի բոլոր երեք պետությունները համագործակցեն ճանապարհներ գտնելով կովկասյան պետությունների հետ ընդլայնելով եւ հարգելով նրանց անկախությունն ու անվտանգությունը: Այդ ջանքերում ցանկացած պետություն կարող է Միացյալ Նահանգներին համարել պատրաստակամ եւ շահագրգիռ դաշնակից, շեշտել է Քոլինզը:

Թուրքիայի դերը Կովկասում գոհացուցիչ գնահատելով, Քոլինզը նշել է Թուրքիայի մասնավոր հատվածի ակտիվ գործունեությունը Վրաստանում եւ Ադրբեջանում: Որպես օրինակ է բերել Տրապիզոնից փոխադրման սահման ճանապարհը: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա. «Նախորդ տարի Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ օդային ճանապարհի բացումը հույս է ներշնչում, որ բաց սահմանային առեւտրի հնարավորություն կստեղծվի այս պետությունների միջեւ», շեշտում է ամերիկացի դիվանագետը: Նա նկատել է, որ առեւտրական եւ գործարար շրջանակները շատ ավելի հեշտ են նոր հարաբերություններ ծավալում, քան քաղաքական գործիչները:

«Որոշակի համագործակցությունը դառնա ոչ թե նույնական, այլ բնականոն երեւույթ, անհրաժեշտ է մտածողության հին եղանակներից հրաժարվելու ցանկություն, ժամանակություն, համաձայն որի մեկի կորուստ մյուսի շահն է», ասել է Քոլինզը եւ ավելացրել, որ Ամերիկան աշխատելու է նաեւ պետությունների համագործակցության եւ նույնական ունի «Կովկասյան արդյունաբերական հիմնադրամ» ստեղծել, որը Կոնգրեսի տրամադրած գումարների բաշխման կառուցողական ծրագրեր կնքելով աջակցելու տարածքի կարեւոր ներդրումներին:

Թեեւս հաշվի առնելով, որ ելույթ է ունենում քաղաքական կազմակերպությունների համագումարի հրավիրած խորհրդաժողովում, Ջեյմս Քոլինզը հարկ է համարել նշել, որ Թուրքիան ընդգրկված լինելով ղարաբաղյան հակամարտության կարգավորման ԵԱՀԿ Մինսկի խմբում, չեզոքություն է պահպանել բոլոր մակարդակներում, ներառյալ նախագահ Սուլեյման Դեմիրելը: Լիազոր դեսպան, նույն ինքը պետքարտուղարի հատուկ խորհրդական Քոլինզը, շեշտելով, որ Կովկասի նորանկախ պետությունները հսկայական խնդիրների առաջ են կանգնած, նշել է նաեւ, որ վերջիններս նույնքան հնարավորություններ ունեն: Վերջում նա հայտարարել է, որ Միացյալ Նահանգները ներգրավված կմնա կովկասյան խնդիրներում, քանի որ դա են պահանջում Ամերիկայի շահերը, Միացյալ Նահանգները շարունակելու են քաջալերել եւ աջակցել այս հիմնավոր տարածաշրջանի պետությունների համագործակցությանն ու զարգացմանը, որը բխում է նաեւ այստեղի պետությունների շահերից:

"SEM & Co" Ltd. EXPRESS LINE
ՀՈՒՍԱԼԻ ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊ, ՖԱՔՍԻՄԻԼԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐՁՐՈՐԱԿ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ:
ԵՎ ԱՅՍ ԱՄԵՆԸ՝ ՀԱՃԵԼԻ ԳՆԵՐՈՎ ԸՆԹԱՑՔՈՒՄ:
ԶԱՆԳԱՀԱՐԵՔ ԵՎ ՀԱՄՈԶՎԵՔ!
ՊԱՏՎԵՐՆԵՐՆ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐՈՎ
28-40-20; 28-43-80; 24-54-57; 27-37-00; 63-65-73; 52-92-69; 58-35-93

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
2 սենյականոց բնակարան Նորքի IV զանգվածում:
ՀԵՌԱԽՈՍ 63-20-39

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
2 սենյականոց բնակարան 5 հարկանի քարե շենքի 1-ին հարկում. Դեմիրճյան 17 շենք:
Հեռախոսներ՝
58-18-41, 52-30-56

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
լորի վանդակներ՝ նախատեսված մինչեւ 5000-ի համար:
Զանգահարել 58.18.41, ժամը 14-ից հետո:

«ԲԻԶՆԵՍ-ՏՈՒՐ»-ը
հրավիրում է
ԵՐԵՎԱՆ-ՍՏԱՄԲՈՒԼ-ԲՈՒԼՂԱՐԻԱ!
Դիմել «Էրեբունի» հյուրանոց, 2-րդ մասնաշենք, 415 սենյակ:

ԼՈՒԾԱՐՎՈՒՄ Է
«Գոհար-91» կոոպերատիվը, գրանցված Սպանդարյանի շրջանում:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
4 սենյականոց բնակարան (ընդհ. մակ.՝ 95 քմ, բնակ. մակ.՝ 65 քմ) քարե շենքի 4-րդ հարկում, ունի վերնահարկ (45 քմ) Ընդհանուր մակ.՝ 140 քմ.
Աջափնյակում (Հանրապետական հիվանդանոցի մոտ):
Հեռախոսներ 34-25-86 տուն. 58-18-41 աշխ (ժ 13^{00}-18^{00}):

Հայաստանի ամերիկյան համալսարանի
հատուկ դասընթացների բաժինը
նոյեմբերի 4-20-ը հրավիրում է
Դասախոսություններ հայկական արվեստների վերաբերյալ
(սահիկների սլայդների ցուցադրումով)
Նախագահ՝ Լեւոն Չուգասզյան
Նոյեմբերի 4 «Հայկական գեղանկարչությունը 19-րդ դարում»
Նոյեմբերի 6 «Հայաստանի Ազգային պատկերասրահի ստեղծման պատմությունը եւ 20-րդ դարի գեղանկարչությունը»
Դասախոսությունը կանցկացնի Հայաստանի Ազգային պատկերասրահի եւ Մարտիրոս Սարյանի թանգարանի տնօրեն Շահեն Խաչատրյանը:
Նոյեմբերի 8 «Հայկական միջնադարյան ճարտարապետության ոսկե դարերը»
Նոյեմբերի 12 «Երեւանի քաղաքաշինական զարգացումը 20-րդ դարում»
Դասախոսությունները կանցկացնի ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի վարիչ Մուրադ Հասրաթյանը:
Նոյեմբերի 13 «Նկարազարդված ձեռագրեր. Թորոս Ռոսլինի արվեստը»
Նոյեմբերի 18 «Հայ կնոջ կերպարն ու ներկայությունը տեսողական արվեստներում»
Դասախոսությունները կանցկացնի երեւանի պետական համալսարանի հայ արվեստի պատմության ամբիոնի վարիչ, UNESCO-ի ամբիոնի վարիչ Լեւոն Չուգասզյանը:
Նոյեմբերի 20 «Հայկական գորգերի գեղարվեստական ընթերցումը»
Դասախոսությունը կանցկացնի ՀՀ Ազգային ակադեմիայի արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող Վահրամ Թաթիկյանը:
■ Դասախոսությունների սկիզբը 18:30: Յուրաքանչյուր դասախոսություն կտեւի 1 ժամ:
■ Դասախոսությունները եւ ցուցադրումները տեղի կունենան ՀԱՀ փոքր դահլիճում (5-րդ հարկ):
■ Մուտքն ազատ է:
Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 27-16-58

«ԿՐԵԴԻՏ-ԵՐԵՎԱՆ»
բանկի կողմից ժամկետային ավանդների ներգրավման պայմանները
Բանկը ֆիզիկական եւ իրավաբանական անձանցից ընդունում է ժամկետային ավանդներ ՀՀ դրամով եւ ԱՄՆ դոլարով:
Ավանդի դիմաց հաշվարկվող տոկոսագումարը կարելի է ստանալ ամեն ամիս կամ ավանդի ներդրման ժամկետը լրանալուց հետո:
Ավանդի դիմաց վճարվող տոկոսադրույքները հետեւյալն են՝
■ ամսական վճարման դեպքում՝ 2,5 տոկոս
■ եռամսյա եւ ավելի երկար ժամկետում՝ ամսը 3 տոկոս հաշվարկով
Ներդրվող ավանդների նվազագույն չափը հետեւյալն է
■ ԱՄՆ դոլարով՝ 300 դոլար
■ ՀՀ դրամով՝ 100000 դրամ

«Պարբերական» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արշակունյաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 2215. Տպաքանակ 4000. Ստորագրված է տպագրության 1. 11. 1996. Գինը 75 դրամ